

«DROSCHAK»
REVUE MENSUELLE
Organe
de la F. R. A. D.

ԴՐՕՇԱԿ

№ 3
MARS
1932
PARIS (France)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԹԿԱՆ ԴՈՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ԳՐԳՆՆ

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ ԺԸՆԵՒՈՒՄ

Հոյակապ տեսարանի առջեւ ենք գտնուում : Աւելի քան վաթսուև պետութիւնների կողմից հարիւրաւոր պատերազմների հազարաւոր մասնագէտների եւ պաշտօնեաների հետ միասին՝ շուրջպար են բռնել պատերազմի Մողոքի առաջ եւ տաղեր են ասում նրա ատամներն ու ճանկերը քաշելու մասին: Իսկ նա, այդ Մողոքը, քիթ-լեզու ցոյց տալով ժրնեւի անկող պոռոտախփոսներին՝ շարունակում է իր գործը Հեռաւոր-Արեւելքում՝ արեան գետեր հոսեցնելով եւ աւերակների կոյտեր դարձնելով մարդկային շէնութիւնները:

Գրամատիրական հասարակարգի ներկայացուցիչներն ու պաշտպաններն իրենց քաղաքական յղացումներից ոչ մէկի մէջ այնքան եղիկելի չեն եղել, որքան հակապատերազմական պայքարի մէջ: Ամենքն էլ միաձայն նշումք են կարդում պատերազմին: Ամենքն էլ «օրէնքից դուրս» են յայտարարում բարձրաստութեան դարաշրջանի այս աղէտալի ժառանգութիւնը: Ծարակարծութիւն չկայ եւ այն մասին, որ պատերազմ նախաձեռնողը մարդկութեան թըշնամի է: Իայց, այս բոլորով հանդերձ, ոյժ ունեցողներից ոչ մէկը հակամէտութիւն չէ ցոյց տալիս ո՛րեւէ իրական միջոց տրամադրելու՝ որպէտքի կարելի լինի ճապոնական ռազմապաշտութեան ատամները փշոթել և հանդցնել նրա հրահրած պատերազմական կրակը, որ հեշտութեամբ կարող է համաշխարհային հըրդեհի վերածնել: Իսկ ոյժ չունեցողները՝ ուժեղի աչք-ունքին նայելով եւ իրենց պոչը փորի տակը քաշելով՝ պղատոնական հառաչանքներ

են արձակում «կացութեան բարդութիւնները» մասին:

Այս եղերազաւեչտական անճարակութիւնը համոռւմ է այնտեղ, որ ոչ միայն ո՛րեւէ պետութիւն չէ մտածում դուրս նետելու երիցս ուխտադրուծ եւ դաշնադրուծ ճապոնիան Ազգերի Դաշնակցութիւնից, այլ եւ անյարմար է նկատում, որ զէնքի եւ բիրտ ուժի պաշտամունքը ներկայացնող այս պետութիւնը իր «պատուաւոր» տեղը չունենայ Չինաստանութեան Սորհրդագծողովի նախադաճութեան մէջ...

Ինչո՞վ պէտք է բացատրել այս «անճարակութիւնը»: Արդե՞օք Ազգերի Դաշնակցութեան եւ կամ հէնց միմիայն մեծ պետութիւնների անզօրութեամբ: Արդե՞օք ազգեցիկ միջոցներն են պակասում՝ սանձահարելու ճապոնիայի աշխարհակալական ախորժակները:

Ինչա՞ւ եւ երբե՛ք:

Կատարեալ տղայամտութիւն կը լինէր կարծել, որ եթէ Անդլիան, Ֆրանսան, Իտալիան, Ամերիկայի Միացեալ Նահանգները եւ Ս. Հ. Միութիւնը կամենային՝ չարտի կարողանային վայրկենապէս դադարեցնել Հեռաւոր-Արեւելքի արեւահեղութիւնը: Կամեցողութեան պարագային, կարիք էլ չէր լինի, որ նրանք չար մեծ ռազմական ուժեր ի սպաս դրնէին, որպէտքի իր ոտնահարած իրաւունքների համար հերոսաբար պայքարող Չինաստանը կարողանար ետ չարտել ներխուժած թշնամուն: Թերեւս նոյն իսկ աւելորդ լինէր զէնքի դիմել, եթէ յիշեալ պետութիւնները, իրենց

արբանեակները հետ միասին, անկեղծօրէն ցանկանալին ճակատ յարդարել ճապոնական ռազմապաշտութեան դէմ: Բաւական կը լինէր եւ այն, որ նրանք, յետ կանչելով իրենց ղեկապաններին ձապոնիայից՝ տնտեսական ու Ֆիլանասական բոլորտի ենթարկէին նրան: Նման կեցածքի հանդէպ, քանի՞ զուլտ պէտք է ունենար միկաղօփ կառավարութիւնը՝ շարունակելու համար այն ընդվզեցողիչ արհամարհանքը, որ նա ցոյց է տալիս համաշխարհային կարծիքի հանդէպ:

Սակայն, խնդիրն այն է, որ աշխարհի հօրերը միմիայն ժողովրդական զանգաճաններին խարելու համար են վաշխատուն բարձրացնում չին-ճապոնական պատերազմի դէմ:

Անկեղծ չէ նրանց վաշխատունը նախ եւ առաջ այն պատճառով, որ նրանք ամենքն էլ իրաւունքի աղբիւրը ուժի մէջ են տեսնում եւ ընդունակ չեն թէկուզ ամենամարդաբ իրաւունքից հրաժարելու առանց ուժի գործադրութեան, եթէ միայն վտահ են վերջինիս յաղթական ելքին: Այս տեսակէտից բացառութիւն չէ կազմում եւ Ս. Հ. Միութիւնը, որ ժողովուրդները իրաւահասարակութեան՝ եւ ընկերային արդարութեան մասին անվերջ սրտառուչ յայտարարութիւններ անելով հանդերձ, երբեք առիթը չէ փախցնում ուժով պարտադրելու իր «իրաւունքները»՝ ուր որ ձեռքը հասնում է: Հետուն չընանք, Ս. Հ. Միութիւնը չէ՞ր, որ նախանցեալ տարի ահազին զինուորական ուժեր ռոքի հանեց՝ ցարական աշխարհակալութիւնից ժառանգութիւն մնացած «իրաւունքները» Չինաստանի դէմ պաշտպանելու համար:

Այնպէս որ, ճապոնացիների վարմունքը սկզբունքօրէն շատ հասկանալի է բոլոր մեծ պետութիւններին: Նրանցից ո՛չ մէկը ճապոնական աշխարհակալութեան դէմ չէ գզում այն նողկանքը, ինչ որ ձեռացնում է՝ հանրութեան աչքին փոշի ցանելու նպատակով:

Սկզբունքային այս ընդհանուր Փոնի վրա՝ իւրաքանչիւր պետութիւն իր առանձին հաշիւներն է հիւսում ձապոնիայի յարձակողականին մատերի արանքով նայելու համար:

Ս. Հ. Միութեան վարիչները յոյսեր են սնունջանում, թէ ճապոնացիները արկածախնդրութիւնը կարող է իրար զցել զբամատիրական պետութիւններին եւ մի նոր համաշխարհային պատերազմ առաջ բերել՝ որ անխուսափելիօրէն կը յանգէր այնքա՛ն երազած համաշխարհային ընկերային յեղափոխութեանը: Ընդհատ է, մտածողներ կան, թէ ճապոնական ընչաքաղճութիւնը կարող է դուրս յորդել Մանչուրիայից եւ ողոտել Ս. Հ. Միութեան սահմանները: Բայց խորհրդային վարիչները շատ չեն մտահոգւած այս հեռանկարով: Ոչ մի հողային բռնադատում չի կարող հարկադրել նրանց ձապոնիայի դէմ պատերազմի ելնելու

եւ իրենց գոյութիւնը վտանգելու: Իսկ, միւս կողմից, ինչ տարածութիւն էլ զբաւելու լինեն ճապոնացիք, դարձեալ շատ հող կը մնայ խորհրդային վարիչներին իրենց իշխանութիւնը բանեցնելու համար: Ահա այս հոգեբանութեամբ եւ մտայնութեամբ, Ս. Հ. Միութեան կառավարութիւնը զերթապատում է չլու կամակաւտարութեամբ ենթարկելու ճապոնական բամանատարութեան պահանջներին, քան թէ ժանիքներ ցոյց տալ նրան: Այդ ժանիքները թոյլ հարեւանների համար են միայն սրտում, ինչպէս օրինակ Չինաստանը, Պարսկաստանը կամ Աւգանիստանը:

Դրամատիրական կառավարութիւնները, ընդհակառակը, յոյսեր են տածում, թէ չին-ճապոնական պատերազմը կարող է յանգել ոռու-ճապոնական պատերազմի, որքան էլ խորհրդային վարիչները ուզենան խոյս տալ սրանից: Պատերազմը իր տրամաբանութիւնն ունի, որ միշտ չէ ներդաշնակում քաղաքական կանխամտածումներին: Խորհրդային վարիչները, չնայած իրենց բոլոր վախկոտութեանը, կարող են պատերազմի հարկադրելու, այդ պարագային — մտածում են զբամատիրական պետութիւնների մէջ — կարգարանայ մարշալ Ֆոշի մարզարէութիւնը՝ թէ բուլեւիզմի գերեզմանը Հեռուոր Արեւելքում պէտք է փորելի:

Այս հեռանկարն ինքնին բաւական հրապուրելի է զբամատիրական կառավարութիւնների համար՝ որպէսզի նրանք ամենքն էլ հանդուրժող վերաբերմունք ունենան դէպի ճապոնական արկածախնդրութիւնը: Բայց, սրանից դուրս, մասնակի պատճառներ էլ կան, որոնք աւելի՛ եւս շեշտում են հանդուրժող վերաբերմունքի անհրաժեշտութիւնները:—

Մի շարք զբամատիրական պետութիւններ Հեռուոր Արեւելքի պատերազմը լաւագոյն առիթն են նկատում փոքր ինչ աշխուժացնելու իրենց երկրի արդիւնագործութիւնը՝ կուռղ կողմերին զէնք եւ գինամթերք ծախելով: Այս հողի վրա մրցում են իրար հետ ոչ միայն բոլոր մեծ պետութիւնները, մէջը լինելով եւ Ս. Հ. Միութիւնն ու Միացեալ Նահանգները, որոնք զերազանցօրէն Չինաստանին են կուր միջոցներ մատակարարում, այլ եւ Հոլանդիայի ու Չեխոսլովակիայի պէս մանր պետութիւններ:

Կան կառավարութիւններ, որոնք, պատերազմական հատուցման եւ գինաթափութեան խնդիրներում իրենց տեսակէտները առաջ մղելով եւ համար, կարիք են գզում ձապոնիայի արկազութեանը, քանի որ նա, իրբեւ մեծ պետութիւն, ազդեցիկ դեր ունի թէ՛ Ազգերի Դաշնակցութեան մէջ եւ թէ՛ միջազգային բոլոր խորհրդատվորներում: Եւ «բնական չէ՞», որ այս կառավարութիւնները չեն ցանկանում ձապոնիային անհաճելի դիրք բռնել: Կամ

պէ՞տք է դարմանալ, երբ նրանց ազդեցութեանը ենթակայ բուրժուական մամուլը, արձագանք տալով ճապոնական հասարակացումներին, եռանդով տարածում է՝ թէ Հեռաւոր Արեւելքի դէպքերը բնաւ պատերազմ չեն ներկայացնում, այլ անշան ընդհարումներ, որոնց պատասխանատուութիւնն ամբողջովին ընկնում է չինական անիշխանութեան, օտարատեսչութեան եւ աւազակաբարոյութեան վրա՞... :

Դրամատիրական պետութիւնների մէջ կայ սակայն մէկը — մեր խօսքը Ամերիկայի Միացեալ Նահանգների մասին է — որ «անկեղծօրէն» կը ցանկանար երկաթէ բուռնքը ցոյց տալ ճապոնացիներին: Կը ցանկանար ոչ թէ այն պատճառով, որ վերջինը յաթի կտոր է դարձնում դաշնագրերը, զէնքի ուժով ոտնահարում տկարի իրաւունքը եւ փաստօրէն օրինականացնում իրաւապէս օրէնքից դուրս յայտարարած պատերազմը: Ոչ: Հայկական Դատի պատմութիւնից մեզ քաջ յայտնի է, որ եանկիների մեծ Հանրապետութիւնը մի առանձին սէք՝ չունի դէպի այս կարգի «մարդկային բարձր նիւթերը»: Նա կը ցանկանար պարզապէս օգտագործել համաշխարհային հանրային կարծիքի մէջ դէպի ձապոնիան ստեղծւած աննպաստ եւ միջնե իսկ թշնամական վերաբերմունքը եւ ազատել մի մրցակցից, որ թէ՛ Պաղատական Ովկիանոսում եւ թէ՛ Հեռաւոր Արեւելքում վտանգում է Հիւսիսային Ամերիկայի կենսական շահերը:

Սակայն, Միացեալ Նահանգները գիտեն, որ ուժերի ներկայ փոխարաբերութեան մէջ իրենց շատ ծանր կը լինի չափուէլ ձապոնիայի հետ, իսկ յոյս դնել միւս պետութիւնների գործակցութեան վրա՝ անկարելի է վերել յիշւած պատճառներով: Մրանով պէտք է բացատրել այն «խաղաբարար հրեշտակի» դերը, որ, արգահատանք ազդող համակերպութեամբ, կատարում են Միացեալ Նահանգները ժընեւում՝ Ազգերի Դաշնակցութեան շուրջպարի մէջ:

Ահա այս ուժերին է յանձնւած չին-ճապոնական պատերազմը դադարեցնելու եւ համաշխարհային խաղաղութիւնը ապահովելու գոր-

ծը: Անհնարին չենք համարում, որ ուշ կամ կանուխ, Չինաստանի մի նոր նւաստացման եւ իրաւազրկման գնով խաղաղութիւնը առժամապէս վերականգնի Հեռաւոր Արեւելքում: Բայց կատարելապէս անհնարին ենք համարում, որ պատերազմը իրապէս օրէնքից դուրս նետուէ մարդկութիւնն ընդմիջտ ազատուի նրա պատուհասներից, ցորչափ պետութիւնների ճակատագիրը գտնուում է դրամատիրական կառավարութիւնների ձեռքին:

Պատերազմներ եղել են եւ հնումը, երբ նորագոյն իմաստով դրամատիրական կարգեր չկային, բայց ժողովուրդներն այնքան անհասուն էին, որ համաձայնում էին արին թափել զահակալական վէճերի, իշխանական փառասիրութիւնների, կրօնական տարբերութիւնների եւ միջնե իսկ առեւանգումների ու թխայնի համար: Մեր ժամանակի մարդկութիւնը շատ է հասունացած, որպէսզի կարելի լինի նրան պատերազմի մղել այս կարգի պատճառներով: Եւ եթէ խաղաղութիւնն այնուամենայնիւ վտանգում է, սրա բացատրութիւնը պէտք է որոնել այն հանգամանքի մէջ, որ ժամանակակից դրամատիրական հասարակակարգը, իր ցանցերի մէջ առնելով մարդկութիւնը՝ ստեղծել է եւ ստեղծում է պատերազմի համար այնպիսի նոր ազդակներ, որոնց բուն իմաստը դեռ չեն կարողանում ըմբռնել ժողովրդական հոծ զանգւածները:

Ահա այդ հասարակակարգի ներկայացուցիչներն են իրենց «արցունքները» խառնում Լեմանի ջրերին՝ ի տես այն արիւնհեղութեան, որի հերթական թատերաբեմն է դարձել Հեռաւոր Արեւելքը: Նրա՛նք են նմանապէս, որ խորհրդային ռազմապաշտների եւ աշխարհակալների հետ ձայն ձայնի տւած, փարիսեցիօրէն կուրծք են ծեծում համաշխարհային խաղաղութեան համար... :

Տեսարանը իրօք որ հոյակապ է: Բայց, դժբախտաբար, դա այլ բան չէ ներկայացնում քան մի նոր փոփոխակը ժողովրդական այն պատմածքի, որի մէջ գայլը հանդէս է գալիս ոչխարների խնամատարի դերում... :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՒԱՆԱՆԻՔԸ ԵՒ ՉԵԶՈՐԻ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայ զրական շարժման դուզանք, այս վերջին տարիներուն, Հակոբ մը կը նշմարէ մաս մը երիտասարդ մտաւորականներու, մասնաւորաբար զրականութեամբ զբաղողներուն թով՝ չեղող սքէմի տակ ներկայանալ Հասարակութեան և իրենց չեզոքութիւնը, որպէս առաջնակարգ առաքինութիւն, յայտարարել ի լուր բոլորին:

Այսպէս, զրական ամսաթերթերու երիտասարդ խմբադիրները, առաջին առթիւ, պէտք կը զգան յայտարարել որ քաղաքական դասանանքներէ Հեռու պիտի մնան իրենք և իրենց թերթերը: Գրական ուրիշ խմբակ մը, թէ՛ և սարբեր տարրերէ կազմած, իր չեզոքութիւնը կուտակեցական Հանդամանքներէն առաքինութեան շարքէն անցուցած էր: Դեռ անցնալիս, երիտասարդ զորք մը կը գրէր.— «Յառաջագահ է այն՝ որ անխանայր սեղմած, դատաւարի կուլ տայով ղեռ կը փայլ, պահելով իր անկախութիւնը, մնալով հեռու սպասման սնեկներէ, այսինքն կուսակցութիւններէ»:

Գրական շարժումէն զուր, քաւական Հաստ խաւ մը կայ արեւտագէտներու, ճարտարագէտներու և գիտութեան ներքած մարդոց, որոնք, իրենց կարգին, քաղաքական դասանանքէ զուրկ լինել և քաղաքական կազմակերպութիւններուն չմասնակցելը առաքինութիւն կը նկատեն. մէկը իր արեւտին, միւրը իր գործնական աշխատանքներուն, մէկը իր գիտութեան կը սպասարկէ և առկէ աւելին, աւելորդ գոհորդութիւն կը նկատէ: Ինքնագոհ իր չեզոքութեանը; շատ յաճախ կը սպասէ որ այդ «առաքինութեան» Համար ուրիշները երիտասարդ մնան իրեն:

Այսքանը քաւական է երևոյթը մատնանշելու: Հայ մտաւորական և գրական սերունդի մէկ մասը քաղաքական որոշ դասանանքէ զուրկ է, քաղաքական կազմակերպութիւններուն մաս չի կազմեր և կը շնայ պատճառաբանել իր չեզոքութիւնը և առաքինութեան Հանգամանքը տայ այդ կազմութեան, քայն Հակադրելով կուսակցական պայքարին և պատակաւորութեան:

Եթէ այս ձայնըր դային Հին սերունդին, որ գիտարես անցնալ մը մէջ կազմաւորեցաւ, որ Հակառակ «Դրօշակոյի նախկին շրջաններու խիտ մտրակումին, մնաց թելով, անտարբեր ու շատ անգամ յետադիական, միտ չեզոքութեան ապահոված, մենք պիտի լռէինք, գիտակցելով որ անոնք իրենց վերջին օրերը կապրին և մեծ օգուտ մը չեն կրնար բերել Հանրային և ազգային շարժման: Իայց երբ այդ ձայնըր կը լսուին նոր սերունդի շարքերէն, իրարմէ անկատ՝ իրարու ձայն կը լսեն, թափանցելով խաւէ խաւ, Հետզհետէ ստատ գետին կը գտնեն նոր Հասնող երիտասարդութեան մէջ, (որ պայմաններու բերումով իսկ՝ Հակամէտ է անձնաւերական վարք օւ բարբքին), չենք կարող մտաւորութեամբ անցնել այդ երևոյթի թովէն, մասնաւոր չենք կարող Հանդուրժել այն միջոցութիւնը, որ չեզոքութիւնը քաղաքացիական պատմութեան տեղ Հրամանէ դիւրահաւան երիտասարդութեան մէկ մասին. պերպրոյ պարտականութիւններէ խուսափելու, ու միւնտն ժամանակ՝ Հանրութեան Երևնալու առաքինութեան շքանշանով:

Արդ, մեր կարծիքով, քաղաքական դասանանքէ զուրկ անհատը, պակասաւոր քաղաքացի մըն է՝ իր պատկանած Հաւաքականութեան մէջ. իսկ այն որ քաղաքական որոշ Համոցումներ ունի, սակայն, քաղաքական կազմակերպութիւններուն անդամ չէ, քաղաքացիական արիութեանէ զուրկ է: Երկու պարագայն ալ, չեզոքութիւն անկախութիւն և առաքինութիւն չէ, այլ նսմ միճակ մը, մանաւանդ, էրբ այդ անհատի պատ-

կանած ազգային Հաւաքականութիւնը քաղաքական տենչոտ պայքարի մէջ է: Այս դատութիւնը կը տարածուի բոլոր անհատներուն վրա՝ ընդհանրապէս, թայց երբ առանձնապէս նկատի առնենք մտաւորականութիւնը, դատալէտը, քնականաբար, աւելի կը խտտանայ: Մտաւորական անհատը մը չեզոքութիւնը ոչ միայն առաքինութիւն չէ, այլ քաղաքական դասալքութիւն է:

Պատճառաբանենք այս տեսակէտը: Վերը յիշած տեսակէտը կը բխի Հիմնական ելակէտէ մը. այդ ելակէտը Հայ Ժողովուրդն ու իր ազատագրութիւնն է: Հայ ազգը կէս դարէ աւելի է, որ մտած է իր ազատարական շարժման ամենէն հոռուն շրջանին մէջ, ու այդ Հանգամանքով՝ Հիմնապէս կը տարբերի այն ազգերէն, որոնք կազմակերպւած անկախ պետութիւն ունին: Այս վերջիններու կեանքը, զործ ազատագրական փոթորկումներէ, կը խորանայ ու կը Հիմնաւորի ինքն իր մէջ, աշխատանքը կը բաժնուի ու կը ճեղքաւորի բազմակողմանիօրէն, քաղաքացիներու անհատական կամ Հաւաքական աշխատանքները, վերջին Հաւուով, կը կեդրոնանան ազգային պետութեան անհամներուն մէջ ու կը դառնան ազգային Հաւաքականութեան արտապայտութիւնը: Հոն, այդ պետութեան մէջ, բոլոր քաղաքացիները եթէ ունին անհատական և քաղաքական աշխատանքի ազատ արտապայտութիւններ, ունին նաև պարտադիր աշխատանքներ (երբեմն ուղղակի, երբեմն անուղղակի պարտադրումներ), որոնք ցրած քաղաքացի անհատներու յաւելիալ տարբեր կը միացան ազգային Հաւաքական Հարստութեան: Այդպիսով, արեւտագէտը, ճարտարագէտը, գիտնականն ու զրադէտը, շատ անգամ կարող են Հեռու մնալ կազմակերպւած պետութեան մէջ գոյութիւն ունեցող կուսակցական ու քաղաքական պայքարներէ՝ և ներքին իրենց յատուկ ասպարէզներուն՝ այդ ձեւով ծառայելու ազգային Հաւաքականութեան, գիտութեան ու մշակոյթին: Այս պարագային, անշուշտ, այս անկախ անհատ քաղաքացիները ի մտի ունին, որ կայ կազմակերպւած անտեսական կեանքը և Ֆիզիքական գոյութեան ապահովութիւնը. գիտեն նաև որ իրենց արեւտի, գիտութեան և ճարտարութեան արդիւնքները կը մնան իրենց պատկանած Հաւաքականութեան մէջ և զօրավիզ են նոյն ազգի քաղաքական և մշակութային ամբողջական կեանքին: Աւելին, գիտեն նաև, որ եթէ անհատներու կեանքները ներկայանայ, ուղեղով, կամ Հարկադրաբար՝ գիւնտը պիտի բթման Հայրենիք Համար, ստոր պիտի վճարեն Հաւաքական կեանքը վարելու Համար:

Ինչպէս կը տեսնէք, այս անկախութիւնը պայմանադրական է և չի նմանիր մեր չեզոքութեան: Անկախ անհատն աւորեայ տեղորոտ քաղաքական պայքարներուն չի մասնակցել և իր ժամանակը կօպտաւործէ ազգային չէնքին վրա ինքնաշարժ գարդեր աւելցնելու, որոնք անկարուստ կը մնան, շնորհիւ ազգային չէնքին: Իսկ միև կողմէ, անուղղակիօրէն, ստանց անգամ ըլլալու քաղաքական կուսակցութեան մը, անկախ անհատը արդէն իսկ կազմակերպւած քաղաքացի մըն է, որովհետև պարտաւոր է կազմելով կապած է քաղաքական մեծ կազմակերպութեան մը, որ պետութիւն կը կոչուի:

Պայմաններն ու պարտաւորութիւնները Հիմնապէս կը փոխուին, երբ Հայ անհատը, մասնաւոր մտաւորական անհատը ազգային քաղաքական կեանքը քննութեան ամենէն: Հայ մտաւորականը մաս կը կազմէ Հայ ազգին, որ, ինչպէս ըսինք, ազատագրական շարժման ընթացքին մէջն է: Ազատագրական շարժումը իր ընդթով ժողովուրդի մը պատմութեան ամենէն փոթորկա-

լի շրջանը կը կազմէ, ուր կուսակցական հակամարտութիւնները կըլլան սուր, Հասարակական շարժումները տենդոտ, առյառ և յուսալքման շրջաններն իրարու կը յարձրանն յարաբերել, և հետեւաբար՝ լարւած վիճակ մը կը ստեղծեն այն ժողովուրդի կենսաբնի մէջ, որ ազատագրութեան ճամբուն մէջ մտած է: Հայ ժողովուրդին վիճակաւոր անելի քան փոթորկալի էր և կը շարունակէ մնալ փոթորկալի: Ուրիմն, հայ անհատը բուրիւղած է այդ լարւած կենսաբնի մէջ կը դրբըը ճշտել, իրար բարիող դասանանքներէն ու համոզումներէն մէկը ընդդրիկը, այսպիսով, ո՛չ միայն քաղաքական յատակ համոզումներ ունենալ, այլ մտնել քաղաքական կազմակերպութիւններուն մէջ և գործուն աշակերտութեամբ՝ ջանալ իրականացնել իր համոզումները: Մնացած աշխատանքները անհատական ընտրի կը կրեն և ներկաւ են անհատի գոյութեան պահպանման: Անհատական գոյութեան պահպանումը, պետութեան ունեցող քաղաքացու ու համար՝ քաղաքական դրական երևոյթ է և կը դորացնէ կազմակերպւած հասարականութիւնը: Մինչդեռ մեզ հայրենու համար՝ անհատական գոյութեան պահպանումը նւագադոյն բարեք մըն է, որպէս ստաղծիկ պահպանումը: Մենք հասարական չենք և հասարական պահպանման կը կարօտինք, ինչ որ չունինք: Հայ ժողովուրդի կենսունակ ուժերու և մտածող տարրերու գերադոյն ճիւղը պիտի կեդրոնանայ հասարական սպառնութիւն մը ստեղծելու, որպէսզի անհատական գոյութիւնն իր կարգին սպահովի: Ազգային հասարականութեան այս հիմնական նպատակին ձգտող քաղաքական աշխատանքի գուր՝ մնացած աշխատանքները Հայութեան համար պերճանք են, նոյն իսկ շատ մը աշխատանքներ՝ անբարձեւոր պերճանք: Այդ աշխատանքներուն կրնայ լծուիլ հայ անհատը, բայց չի կրնար մտնալ հասարական գերադոյն նպատակը: Հայ անհատը, ազատ ազգի մը պատկանող անհատներէն աւելի՛ յաւելեալ տուրք մը պարտաւոր է վճարել ազգային ապաստաբարութեան:

Այս ընդհանուր դատողութիւնները չափենք մեր ներկայ իրականութեան վրա: Կայ Ռորհը. Հայաստանը, մօտ մէկ միլիոն բնակչութեամբ: Կայ մօտ մէկ միլիոն հայութեան մը դասաւորւած Ռորհը. Միութեան զանգաւան մասերուն մէջ: Կայ արտասահմանի հայութեան իր 700,000-ի հասնող զանաւանո՞ւմ: Այս երեք խոշոր միութիւնները միասին կը կազմեն Հայ ազգի հասարականութիւնը, որ դժգոյն է (և չէր կրնար չլլալ) ներկայ կացութիւնն: Հայ բուլեիլիներու և անոնց բարեկամ ձևացողներու ինքնազուգոյթիւնը խիստ կասկածելի է և շատ յաճախ, մեր մասնանշած դժգոյնութեան քօրի տակէն իր դէմըը ցոյց կուտայ: Հայ ժողովուրդի քաղաքական մտքի սեւեռումը կեդրոնացած է հայկական ազատագրութեան վրա: Ու հայ մտաւորականը, դարու մը փոթորկալը պատմութիւնը ժառանգած՝ չի կրնար պատասխան մը չտալ հայկական ազատագրական խրճողին: Երբ ներկայ նեղ Հայաստանը կը աւայտի կարմիր ու ճերմակ շարքի ճերմակներուն մէջ, երբ հայկական խոշոր զանգուանները կը մնան ցրւած Ռորհըային Միութեան սահմաններուն մէջ, առանց միանալու մայր հայրենիքին և ազգային հասարականութեան, երբ արտասահմանի տարաբնի հայութիւնը ենթակայ է ճերմակ շարքին, ցրւած ու անկարգակերպ, կարօտը կը քաշէ ակի մը հողի և մտրողովուն հակած է հայրենիք ունենալու և հայ հասարականութեան միանալու, հայ մտաւորականը չի կրնար անտես առնել այս աչք ծակող իրականութիւնը և անտարբերութեամբ քաշել անկիւն մը:

Ռորհը. Հայաստանի և բուլեիլիկան միտրոյրալին մէջ ինկած հայութիւնը անօրինակ ընունթեամբ մը շղթայւած է: Պայքարն այնտղ կընթանայ ինքնաշարժ ձևով մը և քաղաքական ազատ համոզման հնարաւորութիւնները կը պակսին: Բայց արտասահմանի հայութիւնը ամէն տեսակ հնարաւորութիւն ունի դա-

նաւորելու և կազմակերպելու իր ուժերը և քաղաքական յստակ ճակատներով դիմելու զէպիլ հայութեան ապահովման: Անկազմակերպ տարրեր են որ կը նպաստեն ու կը բաշակեն կուսակցական անբարձալի պատակաւորները, կը ջլատեն հասարական կամբը, կը պղտորեն յստակ դատաւորած ճակատները և կը կտակցեն դիւսկան աշխատանքները: Այսպէս, եթէ այս միջանկեալ տարրերը կազմակերպուած ձևով, կամ բացառապէս համակերպութեամբ՝ դասաւորուած դիւրբ ունեն այս ու այն խնդրի հանդէպ, կողմերը ձեռնթափ պիտի ըլլան ճղճիմ պատակաւորներէ և քաղաքական պայքարը պիտի ստանայ բնականոն ընթացք մը, ուր հակամարտութիւնը կը դառնայ կենդանութեան ազդակ մը և փախանաբար ցոյցը՝ դրեթիք անկարելի:

Հայ արեւտաղէտը, հարուստագէտը, գիտնականը հին սերունդէն, մասնաւոր նոր սերունդէն, ամփոփելով իր ըրթիքն մէջ, ներկելով իր սասպարդին՝ կը գոհարայ այդ անհատական աշխատանքով, քաղաքական համոզումներ և քաղաքական պայքարը. սեփականութիւնը նկատելով միայն ուրիշներուն: Բայց, այս հաստատար պէտք է գիտակցի, որ ինքը կը գործէ տարբեր վիճակներ մը մէջ, ու իր անուղղակի տուրբը չի երթար հայութեան, կամ շատ չնչին չափով միայն: Մինչ կողմէն, այդ խար ազգային ուղղակի և անուղղակի պարտադիր տուրբերէ գերծ է: Այսպիսով, ան հայութեան հասարականութեան համար աշինջ է. որպէսզի ինչ դառնայ, պարտաւոր է քաղաքական աշխարհայացք ունենալ և իր անհատական գործէն զատ, հայութեան կազմակերպւած ուժին մաս կազմել. սա նւագադոյն տուրբն է հայ քաղաքացիին, մեր ներկայ պատմական ժամանակաշրջանին մէջ:

Սոցըը մասնաւորելով մայր դրական շարժման ներքինը հին ու նոր սերունդին վրայ, պիտի ըսենք որ մտաւորական այդ խաբի լաւագոյն ներկայացուցիչները ժամանակին նետած են հայ ազատագրական բոցավառ բուրբային մէջ և իրենց հողեղէն շունչը բերած են ազգային մեծ շարժումին: Նոր սերունդի կենսունակ ու ազանդաւոր տարրերը, սրբազան ուխտով մը, օղակ կազմած են նախորդ սերունդին և կը շարունակեն ճամբան, որ գոհողութեան տուրբով ծանրաբեռնւած է: Բայց, ինչպէս անցալի եմք (մեծ չափով), նոյնպէս հիմա, կան գրազէպներ կամ գրական ու մտաւորական շարժումը սիրողներ, որոնք կուշած կը մնան չեզոքութեան և առաքինութիւն մը կը նկատեն զապստման սրահներէն, այսինքն կուսակցութիւններէն հեռու մնալը:

Հայ դրականութեան ներքող քաղաքացիին աւելի բան մը կը պահանջի, քան սովորական անհատներէն ու նեղ մասնաբիրութեան հետեւողներէն: Հայ դրագէտը յաւանութիւնն ունի ժառանգողըը հանդիսանալու հայ դրականութեան նախորդ հարստութեան, յաւակնութիւնն ունի նոր հարստութիւն մը աւելցնելու հինին վրա, նաև, յաւանութիւնն ունի ստեղծ մը տալու նորահատ սերունդին: Այս կուշումով, հայ դրագէտը, համաձայն իր ճաշակին և տաղանդին կը բաշէ հին ճամբաներէն կամ նոր ճանապարհ կը պեղէ, կը ներկի գոտա արեւտոսին, կամ հասարակական խնդիրներ կը կազմակերպէ արեւտագիտօրէն, բանաստեղծութեամբ կերպէ, կամ արձակով կը քննէ: Իր անկախութեամբ իր տեսիլը կը բանայ մարդկային կամ համամարդկային, ազգային կամ միջազգային հորիզոններուն վրա, բայց բոլոր պարագաներուն մէջ, ան կը խօսի հայ բազմութիւններուն, ասուանքը բաշէ սերունդներուն: Այս ըզգայուն հողին, Փիղիբապէս ու հողեղէն կազմած հայ բազմութեան, որ յաւանութիւնն ունի ամենէն զգալուն և մտածող յակն ըլլալու իր պատկանած ազգին կամ մարդկային բազմութեան, հանգիստ խղճով ու աներևակայ թիթամտութեամբ չի կրնար ապաստանիլ չեզոքութեան, որպէս թէ ազգը հանգիստ-խնձորքի է:

ըլլար, ու ինքն ալ անվրդով, քաշած մէկ անկիւն, արտաշխարհիկ երգը երգելու:

Հայ գրագէտը, ողջ թէ ոչ, անմիջականօրէն կապուած է իր պատկանած ազգի հոգեւոր կեանքին, մասնաւոր, երբ այլ աղբը պատասխարկան փոթորիկի մէջ է: Յայտարարել թէ «անկախութիւնը» պահպանելու համար՝ քաղաքական դաւանանքէ և կուսակցական սպասարաններէ հեռու կը մնան, կը նշանակէ քաղաքական դատաւարութիւնը պնդել անվաւեր առաքինութեամբ:

Չեզոքութեան այս մտայնութիւնը ողբալի ժառանգութիւն մըն է շատ տխուր անցեալէն, — համիրեան ուժեղմէն, երբ զբաղէտը, մտածողը և անձնատէր խաւերը հետու կը մնային «չեղափոխական կրակէն»: Հայ յետադիմական տարրերը իրենց պատուելներով և խոհեմութեան բանբերներով այդ տխուր ժառանգութեան զբոյժակիքները հանդիսացան մեր մէջ և իրենց հաւկյոզափոխական ոգին ուղեցին ծածկել չեզոքութեան պատմութեան տակ և ունեցան զբաղական ու մտաւորական դասէն հեռուորդներ, որոնք իրենց նկարագրով Հայ գրականութեան պատուելութիւնը կը ներկայացրնէին: Այս տխուր անցեալէն ապառնել յետոյ, մտքի քաղա թողչներու այս օրերուն, երբ զբաղական նոր սերունդի մէկ մասը առանձին գոհունակութեամբ չեզոքութեան մէջ կամփոփի, կը զրիւի յառաջադէմ սերունդի իր կողմէն և ետ կերթայ միանալու թուլամտութիւն սերունդի մը, անթոնիչ ու անարեւատ, մանաւանդ՝ անհոգի սերունդի մը:

Չեզոքութեան ժուլութիւնը շատերուն ջով չի բաւականանար իր կեղծ առաքինութեամբ, այլ կը ձգտի աւելցնել իր գարոյական շքանշանները: Որպէս թէ կուսակցական ճշգրտագրաններուն» մէջ սպասող հին ու նոր սերունդի զբաղչունները անձնական շահ մը և բարեկեցութիւն մը ապահովելու համար սպաստանած են հոն, իսկ չեզոք զբաղչուր, ասամները սեղմած զբրկած՝ իր անկախութիւնը կը պահպանէ: Արդ, այս մտածումը ջնարակած է կեղծ ոսկեջրով: Իրականութիւնը ամբողջովին հակառակը կապացուցանէ: Կուսակցական կեանքին մասնակցողները (գոնէ Հ. Յ. Դաշնակցութեան Համար կարող ենք անվարան յայտարարել), հոն մտած են գոհողութեան զգացումով, տառապած են բաբովական տառապանքներով և կամովին

լծած են պարտադիր տուրքի մը, քամելով բոլոր տեսակի անհաստակ հանճարներէն և ապրումներէն: Իսկ չեզոքութեան նշանակի տակ մտնողները, անպարտաճանաչ ու ճկուն, օր մը ալ, օր մը ձախ թեքած են, անհաստակ բարեկեցութեան բոլոր ճամբաները մաշելով: Չեզոքութեան այս կեղծ բարոյական նողկալի է, մանաւանդ մտաւոր դասին ջով, որ դիմադրած պէտք է ընել և թող չտայ որ նոր սերունդի և նորահաս սերունդի թարմ հողին մէջ բուրդ կապէ:

Հայկական կեանքը շիկացած երկաթ դարձած է վաղուան կեանքն է որ կը դարբնէր այսօր: Գաղաքական դաւանանք ունեցող և առաջնական գոհողութեան զգացումներով տոգորւած նոր դարբիններու պէտք ունինք՝ Հայկական ճգնաժամէն դուրս ելնելու համար:

Անտանելի է, վերջապէս, մտաւորականութեան այն խաւը, որ իր ամբողջ կեանքի ընթացքին, սկսած նոյն իսկ իր երիտասարդութեան խանդավառ օրերէն, կը մնայ չեզոք, կը մաշի իր անձնական կեանքով, երբեմն կերպէ իր սփոթին երգերը ու պարբերաբար ճազգային սրտացուութեամբ՝ Հրապարակ կուգայ սրճարաններու կամ այս ու այն թերթի սեւեռակներուն մէջ՝ իր դժգոհութիւնը ցանկուն, իր անգիտութեամբ վայելելու և ազգը կամ մշակոյթը փրկելու ջանալու ջիւղերը ընելու: Փոթորիկներէն հեռու, ոչ մէկ գոհողութեան մասնակից, ազգային կեանքի բարձր փուլերէն անտեղեակ, լուսնէն ինկածի պէս, իսկ քաղաքակաւանութեան բանբերը կը հանդիսանալ ու պատուական դժգոհութիւնը իր սարսած է ալ ու ձախ, յուսալքման մթնոլորտը խտացնելով:

Կեանքի ճամբան այլ է. հայոց պատմութեան ներկայ փուլը կը պահանջէ արի հողինբու ժուլութիւնը, քաղաքական յատուկ դաւանանքով, քոհողութեան գերազոյն գիտակցութեամբ՝ մտաւորական ճառագայթով լուսաւորւած:

Առաքեալ և յառաջապահ: Գերեվարած ժողովուրդները մելտ ալ սպասած են իրենց առաջնիկներուն: Հայ մտաւորականութիւնը գերեվարած Հայ ժողովուրդի մտայն ճամբուն վրա ճրագ բռնելու կոչւած է, անձուրաց պահակի մը գիտակցութեամբ:

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ՆՈՐ ՈՒՂԻՆԵՐ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԵՋ *

Վերջին տասնամեակում ընկերվարական միտքը բոլոր երկրներում վերադաճահաստութեան լուրջ փորձեր է անում. քննութեան են առնում նախկին արժէքները և նոր ու գործնական ուղիներ փնտրում: Արդէն ընկերվարական շարժումն այնքան է զարգացել, որ այլ ևս անհրաժեշտ է դուրս գալ տեսական գաղափարների սահմանից և ծրարելների մշակել գործնական քաղաքականութեան համար: Ինչպէ՞ս իրականացնել ընկեր-

վարութիւնը: Ո՞ր ուղուցութեան հետեւել՝ բուլեիկեան, զերմանակեան, աղայիակեան թէ՞ ուրիշ:

Այս հարցին հետզհետէ ներկում են յատուկ ուսումնասիրութիւններ: Մամուլը յաճախ անդադրադադնում է նրան: Ընկերվարական ժողովները լայնօրէն ըզրազուում են նրանով:

«Դրոշակներ» արդէն առիթ եղել է խօսելու բերդիացի ընկերվարական Դէ Մանի դրքի մասին (Au dela du Marxisme), ուր վերաքննութեան են ենթարկւած ընկերվարութեան ու, յատկապէս, մարքսիզմի հիմնական սկզբունքները: Այս անգամ կը ներկայացնենք երեք ուրիշ հեղինակների գրած գրքեր, որոնք նոյն նիւթն են շօշափում — Մինտսինոնի «Ընկերվարութեան մեծութիւնն ու ստրկութիւնը», Մարսել Դէլայի «Ընկերվարական հեռանկարները» և Կարլո Ռոսելլիի «Ազգայնական ընկերվարութիւնը»: Այս հեղինակներից առաջին երկուսը Փրանսացի են, վերջինը՝ իտալացի: Երեքն էլ ընկերվարութեան խնդիրներին մօտենում են ալից, կիանքի գործնական պահանջների տեսակէտից:

*) Յօդուածի նիւթն ամուում է Ֆրանսիական կոմունիստական կուսակցութեան և կոմիսնոնրնի ճայիկին յայտնի գործիչ Պալ Մարիանի մի գրութիւնից: Մարիանը 18 ամիս մնաց Ռուսաստանում և թուլիկներին գործին մտնից ծանոթացնող յետոյ՝ խցից յարաբերութիւնները նրանց հետ: Իր տպաւորութիւնները լայն ընծայից մի առանձին հաղորդով, որ հոբիքից. Ռուսաստանի մասին հրատարակած լուսագոյն գրքերից մէկն է:

Մոնտանիոնը իր գրքի հենց առաջին էջերից գրոհել է դիմում մարքանս վարդապետութեան դէմ:

«Ընկերվարութեան մեծութեան կողքին, գրում է նա, կայ և նրա ստրկութիւնը: Այդ ստրկութիւնը հնացած վարդապետութիւնն է, բոլոր այն հին, անպէտք ու խիստ բանաձեւերը, որոնց մէջ արգելափակում են ընկերվարութիւնը»:

«Ընկերվարական վարդապետութիւնը այլ ևս համապատասխան չէ փաստերին: Բնագրիներն արգելում են ամէն մի շրահան դործ: Արդի ընկերվարութեան թուլութեան պատճառն այն է, որ գործն այլևս չի համապատասխանում նրա տեսութիւններին: Նա կարող է լինել գործն միայն իր վարդապետութիւնից հրաժարուելով»:

Այսքան անխրայակ ու Վճռական, Մոնտանիոնը միտամտակ դառնացում է, թէ «մարքսիսմը բովանդակ ընկերվարութիւնը չէ»: չպէտք է չփոխել այս երկու հասկացողութիւնները:

Մարքսիզմի և ընկերվարութեան տարբերութիւնը նոր ըմբռնում չէ Ֆրանսական ընկերվարութեան համար: Նա գոյութիւն ունի շատ վաղուց: Յիշենք, թէ՛կող, ժողովի քուլն վէճերը Գիդի ու Լաֆարգի հետ, Երեսուցի տարի առաջ: Ծրանական ընկերվարական միտքը այն ժամանակ էլ ակնյայտնի կերպով հակած էր ժողովի տեսակէտին, իսկ այսօր ժողովից դուրս ակնյայտնի էր Մարքսիստ դիմում է աւելի հեռուները: «Եթէ, գրում է նա, գծենք քաղաքական բեժիմների փոփոխութեան կոր գիծը և համեմատենք տեսնական դարաշրջանն գծի հետ, ստիպւած կը լինենք ընդունել, որ նրանց միջև ստոյգ ու մշտական փոխյարաբերութիւններ գոյութիւն չունին»:

Սա արդէն կատարելա Ներումն է մարքսեան դասանանքի, որի հիմքը այն մտքն է, թէ քաղաքական երևույթները միշտ պայմանաւորած են տնտեսական պատճառներով և, հետևաբար, զարգանում են իրար հետ կապւած, զուգընթաց: Գաղափարականութիւնը, ինչպէս, առհասարակ, ամէն դաղափարախօսութիւն, ինքնուրույն արժէք չէ: Նա գոյութիւն ունի այն չափով, որ չափով որ կան նրան ծնունդ տող տնտեսական արդիւնները:

Փոխելով տնտեսական դործնի գերադաս դերը՝ Մոնտանիոնը ձեռք է բարձրացնում և մարքսիզմի սերբութիւն սրբոց՝ պատմութեան դիալեկտիկական զարգացման սկզբունքի մը: Նրա կարծիքով «մարքսիզմի թիղ կողմերից մէկը այն է, որ նա ներշնչում է դրամատիքութեան ճակատագրական խորտակման հասար: Իրանով է բացատրում Մարքսի աշակերտներին համարձակութեան պահարը»:

Ինչո՞ւ դործել, ի՞նչ կարիք կայ ճիգ թափելու, երբ հասարակութեան ընկանուն գարգացում մեղ պիտի հասցնէ մեր նպատակին»:

Այն ինչ, Մոնտանիոնը համոզւած է, որ այդ ճիշտ չէ. «Կարելի չէ պնդել, թէ արդի արդիւնաբերութեան զարգացումը տանում է Կարլ Մարքսի նախագուշակած բեժիմին»: Ընդհակառակը, դրամատիքական աշխարհում, ինչպէս և, ընդհանրապէս, մարդկային համակեցութեան մէջ ստով են եկել աղբակներ, որոնք Մարքսի ժամանակ դոյութիւն չունէին կամ յստակ ձևաւորւած չէին: Կուսակցութիւն, արհեստակցական միութիւններ, բացմայիտի աշխատանքական կազմակերպութիւններ, անդամ պետութիւնը, որ կամաց-կամաց անցնում է ընկերվարականների ձեռքը, օր օրի մը փոխում ու առավ են մղում հասարակական կարգը: Պետութիւնը, որ Մարքսի համար դրամատիք դասակարգի գերիշխանութեան դործն էր, հնազանդ ստանում է ընկերվարական բովանդակութիւն և սկսում է ծառայել աշխատանքութեան շահերին: Ընկերութիւնը անկատարել կերպով ձևափոխուած է. «Պանդաղ, բայց հաստատապէս մարդկութիւնը քայլում է դէպի յառա-

ջաղիմութիւն՝ օգտագործելով ամէն ինչ, նոյն իսկ դրամատիքութիւնը»:

Այսպիսով, Մոնտանիոնի համար յեղափոխութիւն չկայ: Մարքսեան վարկածը «բունագրաւորների բունագրուման» մասին այլևս հնացած դադարափար է. «Հնարաւոր է միայն տնտեսական կարգի քնաշրջումը»:

Ինչաչընում և ո՞չ յեղափոխութիւն: Իայց, միշտ կողմից, ո՞չ էլ դէտարմինից, այսինքն՝ ազատ կամքի իստում: Ընդհակառակը, Մոնտանիոնի համոզումով ընկերվարութիւնը պիտի կառուցուի անհատների ազատ ստեղծագործական ճիգերով: Անհատի դերը շատ մեծ է, անհամեմատ աւելի հզոր, քան տնտեսական զարգացման տարեբային թափը:

Արտադրական ուժերի զարգացումը բաւական չէ, պէտք է մարդիկ էլ պատրաստ լինեն պատահուելու ընկերվարութեան յաղթանակը: Այդ պատճառով, ընկերվարական կուսակցութիւնները աշխատանքը այժմէն իսկ պէտք է ներքի հասարակութեան նախապատրաստութեան, աշխատաւոր գանգաւանների դաստիարակութեան, որպէսզի նրանք էլ վիճակի լինեն ընկերվարական հանրակարգ կամեակիցսկիւն:

Ի՞նչ պէտք է անել դրա համար: Մոնտանիոնի կարծիքով, աշխատաւոր դասակարգի առջև կայ միայն մէկ ճանապարհ — գործնականօրէն մասնակցել ընկերային կեանքին և համակուել ընկերային ոգով ու գործնական կարողութեամբ: Չպէ՛տք է խուսափել իշխանութիւնից, պէտք է մտնել կուսակցութեան մէջ, գործակցել բուրժուազիկ ձախակողման տարրերին: Ընչու է, ընկերվարականների իշխանութեան գլուխ անցնելն էլ դեռ բաւական չէ ընկերվարութեան իրականացման համար, բայց նրանով կը հեշտանայ ընկերային նրութի և մարդկային հոգիների կերպարանափոխումը ընկերվարական ուղղութեամբ:

Ընկերվարութիւնը պիտի հաստատուի ոչ թէ դասակարգային կուլի օ յեղափոխութեան միջոցով. ո՞չ, նա հետզհետէ պիտի բիւն դրամատիքական կարգից: Աստիճանական ձեւափոխումներով, մարդու գիտակցի շնորհի և աշխատաւոր գանգաւանների թափած ճիգերի հետեանքով ներկայ հասարակակարգը կամաց-կամաց պիտի լեցուի ընկերվարական բովանդակութեամբ և, ի վերջոյ, պիտի հաստատուի ընկերվարական կարգ: «Մի՛նք գտնուում ենք ճամբաների խաչաձևման կէտում, եզրակացնում է Մոնտանիոնը, ընկերվարականները, դէպի՛ դիպ, դէպի՛ հրամայող դիրքերը: Ժամանակը չի՛ պատում»:

Մոնտանիոնի դիրքը տաք շատագուցանք է Ֆրանսական ընկերվարութեան աջ թեւի հետապնդած ուղղութեան: Նրա ամբողջ հիմնաւորումը բխում է գործնական ոգուց ու քաղաքականութիւնից, բայց նրա ներկայացրած փաստերն ու դատողութիւններն ունին անհամեմատ աւելի լայն հետազոտութիւն: Նրանք յատկանշում են մի մտայնութիւն, որ ստակ Փրանսական չէ. ամբողջ աշխարհի ընկերվարական միտքն էլ պլուարում է նոյն հարցերի շուրջը:

Միայն Մոնտանիոնը չէ, ուրիշ շատ ընկերվարականներ էլ կան, որոնց կարծիքով անհրաժեշտ է ճանապարհանքի նկատի ունենալ վախճանական ազնի ու բարձր մի նպատակ, բայց մասնաւոր այդ նպատակի տանող միջնորդական հանգրւանները, բացատրել, որ այդ հանգրւանները կարելի է անցնել հետեւելով միայն իրատես, յստակ ու ծանաղուն քաղաքականութեան»:

Այս տեսակէտի վերջ պատշաճ է և Մարքսի Գի՛ւնան, որ իր «Ընկերվարական Հեռանկարներ»ում նոյնպէս անմեղ առաջ ընտււ է տնտեսական մատերիայիցով և ազատութեան խնդիրը, աշխատում է պարզել ընկերվարական վարդապետութեան յարաբերութիւնը ժամանակակից պայմանների հետ, ցոյց տալ ընկերվարութեան ճանապարհը՝ դրամատիքութեան վրայով և պետութեան աշակցութեամբ:

Մտնանիւնը գործնական միտք է, երկասարք ճարտարաբանութեան միջոցով է, նախքան երեսփոխան, ընկերակազմութեան եռանդուն քարոզիչ ու գաղափարաբան: Լայն զարկունակ տեր, օժտւած կենցեղ ճարտար փորձով՝ նա չի բռնաբարւում միայն գործնական ճարտարով, այլ իր տեսակէտը հիմնաւորում է փիլիսոփայութեան, ընկերարանութեան, տնտեսագիտութեան ու քաղաքագիտութեան համայնքով: Այդ պատճառով, նրա գիրքը միայն օրայ արժէք չունի, այլ լուրջ դիտական աշխատութիւն է:

Շատ մեծ նմանութիւն կայ Դէյայի և ժորձէի գաղափարներէ միջև: Դէյայի ընկերային աշխարհաշարժան անցքի հիմքը կազմում է Դիւրքէյի ընկերարանութիւնը, որ բայն տեղ է տալիս բարոյական ազդակին: Դէյայ ընկերակազմութեան տեսութիւնը բոլորովին դուրս է վանում նիւթապաշտպանի և նախաօժանումի բնագիտութիւնը և տեղը դնում է արդի գաղափարապաշտութեան (իդէալիզմի) սկզբունքները: Նրա կարծիքով տնտեսական յարաբերութիւնները մարդկային միանգամայն դիտակից կամ գիտակցութեան մտաշնչի գործողութիւններ են: Ընկերային ապագան ամբողջապէս կախած է մարդու կամքէ: Ընկերակազմութիւնը կապւած է մարդու ազատ ստեղծագործութեան հետ: Եթէ մարդիկ կամենան, ընկերութիւնը կը ձևափոխուի ընկերակազմական կարգի, չկամենան՝ ընկերակազմութիւն չի լինի:

Եթէ ընկերակազմութիւնը մարդկային կամեցողութեան խնդիր է, ապա առաջնակարգ նշանակութիւն են ստանում արտադրութեան և կամքի գաղափարները: Ընկերակազմութիւնն այլևս պատմական անհրաժեշտութիւն չէ, հասարակական գաղափարն անխորտակելի արդիւնքը շփոթի լինի, այլ պիտի դայ շնորհիւ մարդու կամքի ազատ ստեղծագործութեան:

Այս փիլիսոփայական նախադրեալների վրա է հիմնում Դէյայ իր ընկերակազմական գաղափարները: Դժուար չէ տեսնել, թէ ինչ խորանի տարբերութիւն կայ նրա և մարքսեան գաղափարների միջև. երկու հակոտնեայ բնուիտներ:

Այս հակացողութեան լոյսի տակ բոլորովին այլ դնահաստութիւն է ստանում և դրամատիքութիւնը, որ Դէյայ համար ընկերային անկողի օրէնքների ենթակայ, դրամատիքութեան անհրաժեշտ ու անխտանախի տնտեսական դրութիւնն է: Ընդհակառակը, դրամատիքութիւնն էլ քաղաքակրթութեան մէկ արդիւնքն է, ինչպէս իրենից առաջ արդէն գոյութիւն ունեցող արդիւնքները՝ ազդութիւնը, կրօնը, ուսմակալութիւնը, պետութիւնը և այլն: Իր զարգացման ընթացքին, նա յարմարեց, համակերպեց այս վերջիններին, նրանց ազդեցութեամբ ստացաւ որոշ ձևեր ու յատկութիւններ, ինչպէս բանուրների շահագործումը, կամ սպառողների թաղանթ, որոնք անպատճառ չեն բխում իր բնաւորութիւնից: Բացի այդ, նա ինքը ստեղծեց մի շարք ճակատագրաբանութիւններ՝ ուժեր, որոնց հետ բախակազմ եղաւ բախում մէջ մտնել:

Այսպիսով, դրամատիքութիւնը մի անձն ու տարբերայն օրէնքների հնազանդող կուր ոյժ չէ, ինչպէս երևակայում են յեղափոխական մարքսիստները, ոչ էլ սահմանափակ բարենորոգման առարկայ: Դրամատիքութիւնը, գոնէ նրա երրօնական ձևը, իբրև գիտակցութեան զարգացող ընկերային երեւոյթ, ինքն է կազմակերպում իր կենսուն ու յոսանալիսութիւնը՝ շիման մէջ մտնելով արտաքին ու ներքին անհայտ ազդակների հետ: Նա արդէն ապրել է «նաճարակաւ» չըբանը և այժմ գտնուում է ինքնասահմանափակման և ունեցածը պահպանելու գոյուշաւոր քաղաքակրթութեան փուլում: Անելի պաշտպանող ոյժ է, քան քարձակողը՝ Ստիպլանդի կազմակերպել շուկաները, որոշ օրէնքների տակ դնել արտագրութիւնը, ճշտել ու սահմանել ազգային դրամատիքութիւնների փոխարարբերութիւններն ու ազդե-

ցութեան դաշտերը, կնքել միջազգային համաձայնութիւններ ու տնտեսական համագործակցութիւններ՝ ոչ իրան կործանարար մըրքութիւններից ու ճգնաժամերից խուսափելու, այլ և մարդկային տնտեսական գործողութիւնների տակի բանաւոր և արդիւնաւետ հիմքերի վրա դնելու նպատակով: Այսպիսով, դրամատիքութիւնը շինարար, ստեղծագործող ոյժ է, մինչ յեղափոխական մարքսիզմի աչքին՝ նա քաղաքային գործուն է:

Դէյայն ըրէ է տալիս, որ արդի դրամատիքութիւնը էականօրէն փոխուած է համեմատած նախորդ շրջանի հետ: Ամենէն ցայտուն երևոյթը դրամատիքութեան կրթման խիստ սերտ կերպով միացած երեք հիմնական տարրերի՝ սեփականութեան, շահի և իշխանութեան տարանջատումն է: Այժմ սեփականատէր անպատճառ շահի և իշխանութեան տէրը չէ: Մէկը որ խոչըր գումարներ է մտցնում որևէ բաժնետիրական ձեռնարկի մէջ, կարող է բնաւ մաս չունենալ նրա կառավարութեան մէջ:

Փոխուած է, վերջապէս, և պետութիւնը, որ դեռ երէկ ամբողջապէս դրամատիքութեան ձեռքին էր դրոււում և ծառայեցում էր նրա օգտին: Աստիճանական ուսմակալաբացումով, նոր հասարակական ուժերի ներգրաւումով՝ նա վերածուում է և տեղի ու տեղի անցնում աշխատաւորութեան ազդեցութեան տակ: Հիմա էլ արդէն նա սկսել է կաստարել «հակադրամատիքական» դեր. վաղը ամբողջապէս կը լծուի ընկերակազմական բուսմակալութեամբ և կը գործէ ի նպաստ ընկերային նոր պահանջների:

Այս սկզբունքներից, Դէյայն, արամարանական ներդաշնակութեամբ, հետեւեցում է ընկերակազմական գործնական քաղաքակրթութեան ծրագրեր: Առաջին հերթին անհրաժեշտ է օգտուել՝ ժամանակակից պետութեան հակադրամատիքական յատկութիւններից, ձեռք առնել պետական իշխանութիւնը և նրա միջոցով շարժման մէջ դնել ազգային և միջազգային կազմակերպութիւնները: Յետևելով պետական ուժի վրա՝ պարբերի դրամատիքական խոչըր միութիւնների գերիշխանութեան դէմ: Այդ պայքարը պէտք է տարի ոչ թէ անմիջական ու զանգվածային համայնացումների ձևով, այլ հարկային քաղաքակրթութեամբ, հասարակական աշխատանքների կազմակերպումով, երևմտական միջոցներով, մաքսերով, միջազգային տնտեսական համաձայնութիւններով, դրամատիքները, արդիւնաբերութիւնը, տնտեսական մեծ միութիւնները պետական և աշխատաւորական հակաշնչի տակ առնելով և այլն: Պետութիւնը ոչ միայն քաղաքական գործուն է, այլ և զօրաւոր տնտեսական ոյժ է: Ընկերակազմանների ձեռքին այդ ոյժը կը ծառայեցի յօդուտ ընկերային բարենորոգումների և կը դիրացնէ դրամատիքական հասարակակարգի խաղաղ փոխանցումը ընկերակազմական կարգի:

Այս փոխանցման ընթացքը Դէյայն պատկերացնում է հետևեալ կերպով. պետութեան անցնելով ընկերակազմական ազդեցութեան սահմանների մէջ պէտք է առնէ հասարակութեան տնտեսական գործառնութիւնները, առաջին հերթին պէտք է ազգային և միջազգային բախանիւններով կազմակերպել իշխանութեան ու կառավարութեան համայնացումը: Երկրորդ քայլը պէտք է լինի վստասովի համայնացումը՝ հասարակական սպառնալիցութեան և արդիւնաբերութեան վրա դրւած տուրքերի միջոցով: Վերջապէս, երրորդ քայլը պէտք է լինի արհեստակցական միութիւնների, քաղաքային ու գրեղական բոլոր ախլի համագործակցական կազմակերպութիւնների, քաղաքային տնտեսութիւնների և աշխատաւորական այլապես ընկերակազմանների մասնակցութիւնը իշխանութեան, որին արդէն կը յարդրէ սեփականութեան համայնացումը:

Այս ճանապարհով, առանց խզելու կապերն անցնելի հետ, առանց հիմնական փլուզումի, խաղաղ միջոցներով

րով, դրամատիրութեան ծոցում ծաւալող հակադրա-
մատիրական ուժերը կը հասցնեն ընկերվարութեան:

Ըստ էութեան սա նոյն ճանապարհն է, որով քայլում է Մոնտանիոնը, սակայն, Դէյան միտքը աւելի խորունկ է ու բացմակողմանի, նրա հիմնադրումներն աւելի սկզբունքային են և աւելի մօտ ընկերվարութեան զարգացման հիմքերին: Նա աշխատում է յաղթահարել հին տարաբանութիւնները և համադրական աշխարհահայեացք ստեղծել Բէնըտայինց ու Կառուցիկից, ժողովեց ու Դէյանց, յեղափոխական ու բարենորոգչական դրուժիւններէն, ուսմակովարութիւնից ու ընկերվարութիւնից և նոյն իսկ բոլշևիկից: Մի բանում, սակայն, նա բացայայտորէն անկշտոյ է՝ պատմական մատերայակովմի և Դիւրիզէյմի ընկերաբանութեան հաշտեցման խնդրում: Այստեղ համադրութիւն չկայ: Մարքը ամբողջապէս փոխարինում է Դիւրիզէյմով: Նրա ձեռնարկովմի պատմական մատերայակովմը «հոգեբանական և ընկերաբանական վերլուծութեան մի երանակ է, որ համապատասխան է դրամատիրական քաղաքակրթութեան և դրամատիրութեան շրջանում տիրող մտայնականին»: Ի հարկէ, մարքիովմի նշոյն իսկ չէք գտնի այս ձեռնարկման մէջ: Դէյան հետեւողական և անկերպապահ հակամարքեւտ է:

Աւելի է գնում է այս ուղիով իտալացի ընկերվարական Կարլո Ռոսելլին իր «Ազատական Ընկերվարութիւնը» գրքում: Եթէ Մոնտանիոնն ու Դէյան իրենց զարգացմանը մշակել են Փրանսական ընկերվարութեան ուղղափառութեան դէմ մշած անմիջական պայքարում, այսպէս ասենք, կուէ առաջաւոր դիրքերում, Ռոսելլին իր գիրքը գրել է աքտորի մէջ, Լիպարի կղզւում, ուր արգելափակւած էր Մուսոլինիի հրամանով: Ինականաբար, նրա միտքը չէին կարող զբաղեցնել և Փաշիզմի տիրապետութեան պայմանաւորող խնդիրները: Նա գտնում է, որ Փաշիզմը իշխանութեան գլուխ եկաւ իբրև հետեւանք իտալական ընկերվարութե ն այլախորհման, իսկ այդ այլախորհումն էլ՝ արդիւնք է մարքիւտական աշխարհահայեացքի անցորութեան:

Մարքիստական աշխարհահայեացքի հիմնական սկզբունքն է աշխարհի մեքենայական ու դէպքմիտական ընկերվարութիւնը: Մի տեսակ ճակատագրականութիւն կայ մարքեան փոխտոյալութեան մէջ, ընկերային զարգացման նախորդում: անկախ մարդկանց կամեցողութիւնից դրամատիրութեան պիտի յաղթէ ընկերվարութիւնը: Ռոսելլին ըմբոստանում է այս հասկացողութեան դէմ: Ո՛վ սասց, թէ դրամատիրութիւնը անպայման ծնունդ պիտի տայ ընկերվարութեան: Ընկերվարական կարգը կը ստեղծուի այն շափով, ինչ շափով որ բանտորական շարժումը կը կամենայ ու կը շանայ: Ընկերային կարգերն արդիւնք են մարդկային կամքի:

Բանտորական շարժման միջևե ալթմ կրած անյաշտութիւնների գլխաւոր պատճառը ընկերվարական սխալ վարդապետութեանն է: Ժամանակն է հիմնական վերաշահատութեան ենթարկել այդ վարդապետութիւնը:

Մարքիստական մտածելակերպը անոյժ է գտնուել միշտ, երբ պէտք է եղիլ գործնական վարքադէմ մշակել: Նրանով կարելի է, յետին թւով, բացատրել դէպքերը, բայց նախատեսութիւնը հնարաւոր չէ: Աղբալնութեան կամ Փաշիզմի պէս խելոյր պատմական երեւոյթներն, օրինակ, նա չկարողացաւ նախատեսել:

Եւ այդ զարմանալի չէ: Մարքիզմը 19րդ դարի արդիւնաբերութեան ու հասարակական մտքի պտուղն է: Այժմ 20րդ դարն է, երբ դրամատիրութիւնը շատ է փոխուել և այն էլ ոչ Մարքի նախատեսած ձևով: Երբ Մարքը վիճում էր իր ժամանակայ լանքաշիրքի

հիւսածեղէնի գործարանատիրոջ հետ, ճշմարտութիւնը, ի հարկէ, նրա կողմն էր: «Բայց երևակայեցէք, ասում է Ռոսելլի, որ մեր ժամանակներում ուղղափառ մարքիստը վէճի բունի Ֆորդի հետ, նա կը տեսնէ որ իր պահանջների մի կարևոր մասը արտադրութեան քննադատում արդէն կարգեւէ իր արժէքը ի տես այն ամենի, որ իրականացնում է Ֆորդը: Մեր մարքիստը ստիպւած է ամբաստանութիւնները փոխարինել բարոյական փաստերի դեմին վրա, կայունացած արտադրութեան միապաղպղ ու բթացնող կարգին հակադրել որակի ու բարոյականութեան արժէքներ, բանտորների իրատեւքը անկատարութեան և մտաւոր զարգացման»: Ռերիջ խօսքով, անտեսական ազդակների փոխարէն առաջ քաշել հոգեբանական ու բարոյական միջոցներ: «Ընկերվարութիւնը, ըստ Ռոսելլիի, ո՛չ համայնացում է, ո՛չ բանտորութեան իշխանութիւն, ո՛չ էլ նոյն իսկ յիստորիկ հասարակութիւն: Ընկերվարութիւնը, եթէ անեկու լինելը նրա էություն, ազատութեան և արդարութեան զարգացման յարաճուն իրականացումն է մարդկային հասարակութեան մէջ, ամէն մի մարդ էակի հոգու խորքում թնկնուած բնածին գաղափարները»:

Ուստի և Ռոսելլիի համար, ընկերվարութիւնը նախ և առաջ ազատութեան հարց է: Եւ քանի որ ազատութեան բարձրագոյն արտայայտութիւնը հանդիսանում է ազատականութեան զբաղքափակ տեսութիւնը» (էքսերպլիզմը), որ ամէն բանից բերիլից դատում է մարդ անհատի ազատութիւնը, ընկերվարականները պէտք է այդ զարգացման արժեքն պահպանողական դարձնեն բուրժուազականարդի մեղքից և տան նրան ընկերվարական բովանդակութիւն: Այստեղից և՛ ազատական ընկերվարութիւն» ձեռնարկումը:

Ռոսելլին նախատեսում է, թէ այս ձեռնարկումը շատերին կարող է թւալ արտասոց ու հակասական: Զէ՛ որ ընկերվարութիւնը հենց ծնունդ առաւ իբրև հակադեմոկրատիկ ազատականութեան, որ տիրող էր 19րդ դարում: Եթէ ինչպէ՛ս հաշտեցնել այդ ներհակ հակացողութիւնները:

«Այն ժամանակից ի վեր, պատասխանում է Ռոսելլին, մեծ ճանապարհ է կտրւում և բաւական փորձ է հաւաքւած: Կամոց-կամոց այդ երկու հակադիր տեսակետները մօտեցան: Ազատականութիւնը համակերպւեց ընկերային խնդրին: Նա ալլաւ անպայման կապւած չէ մանչէստեան դուրոյցի գասական սկզբունքների հետ: Ընկերվարութիւնը դժարութեամբ, բայց սկիւտայանի կերպով ազատագրում է ուսույթային տարրերից: Նրա մէջ զգացում է մի նոր յուշում՝ ազատութեան և ինքնօրինութեան հարցերով: «Արդեօք ընկերվարութիւնը ազատական է դառնում: Արդեօք ազատականութիւնը ընկերվարական է դառնում: Եւ այս և այն»:

Ընկերվարութիւնն ու ազատականութիւնը համադրում ու միանում են, և այս համադրութեան մէջ՝ ազատութիւնն այլևս միայն նպատակ չէ, այլ և միջոց միաժամանակ: Ազատութեան սկզբունքների իրականացումը գործնականում առաջ է բերում նոր ազատութիւն, և ազատութիւնը ծնունդ է ընկերվարութիւնը:

Ռոսելլին էլ, ինչպէս և Մոնտանիոնն ու Դէյան, յանդու է միևնոյն գործնական եզրակացութիւնների. ընկերվարութիւնը կարող է լինել միայն հետեւանք մարդկային գիտակից ու կացմակերպւած ճիղերի. փոխանցումը հին կարգից նորին պէտք է լինի բարեխորհումների միջոցով: «Բարեխորհումը յարաւել յեղափոխութիւն է», ըստ Դէ Մանի, և Ռոսելլին ամբողջովին որդեգրում է այդ տեսակետը: Հետևաբար, ընկերվարականները մէկ ոտովով պէտք է կանգնեն դրամատիրական աշխարհում, միւսով՝ ընկերվարական: Այս երկու աշխարհների միջև ձգւած կամուրջը պէտք է աստիճանաբար ամրանալ, յայնանայ, մինչև որ հին կարգը բոլորովին տեղի տայ նորի առևել: Յերափոխա-

կան մարքսիզմի պահանջը՝ Հիմքից քանդել դրամա-
տորութիւնը և բոլորովին նորից սկսել ընկերվարու-
թեան կառուցումը Ռուսլիին թուում է անհեթեթի.
«Ընկերային երևոյթիներէ բնագաւառում նա՛ մեայն
իրաւունք ունի քանդելու, ով կարող է շինել»։ «Ըն-
կերվարութիւնը իրաքանհիւր օր արդարութեան վե-
րացական խնդրից դառնում է ընդունակութեան խըն-
դիր։ Պրուզոնը վերագտնում է»։

Եւ, յիշուի, «Պրուզոնը վերագտնում է»։ Հին
արժեքները նոր գին են ստանում։ Մարքսիզմի լուծը
թոթափում է ընկերվարութեան վիզը։ Ի տեղի տնտե-
սական մատերիալիզմի կոյր ու ներքինիացնող վարդա-
պետութեան նորից իշխող են դառնում մարդկայնու-
թեան և ազատութեան սկզբունքները։ Ընկերվարու-
թիւնը վերագտնում է դէպքի այն ակունքները, որից
ստեղծ էր ստանում նախաբանական շրջանում։ Նորից
հանրային հետաքրքրութեան կենտրոնում դրւում է
մարդը իր անհատական ապրումներով՝ ձգտումներով,
կրթով ու կամքով։

Մոտոանոն, Դէա, Ռոսելլի վճռականօրէն դատում
են ընկերվարութիւնը մարքսիզմից։ Հայեացքների
տարբերութիւնը նրանց և ուղղափառ մարքսիստների
միջև այլևս միայն ուղիների կամ գործելակերպի խըն-
դիր չէ, ինչպէս առաջ՝ ռեւոլյուցիոնիստների և ուղղա-
փառների միջև, այլ ընկերվարութեան Հիմնական ըմ-
բանումի։ Նրանք ուզում են ընկերվարական գաղափա-

րախօսութիւնը համաձայնեցնել մարդկային մտքի
գարգազման նորադոյն պահանջներին։

Մեզ համար երևոյթը հետաքրքրական է և ուրիշ
պատճառով։ Նախ՝ քննական վերաբերում դէպի մարքս-
եան դաւանաբանութիւնը մեր աչքին ինքնին առողջ և
քաջալերելի փաստ է։ Դաշնակցական միտքը միշտ էլ
քննադատաբար է վերաբերել մարքսիզմին։ Անհատի
դերը պատմութեան մէջ, հոգեբանական ու բարոյական
ազդակները՝ մեր աշխարհայեացքի Հիմնական տար-
րերն են։ Պատմափիլիսոփայութեան մարքսիստական
դաւանանքը խորթ է մեզ։

Երկրորդ՝ ուշագրու են այն ուղիները, որով ըն-
թանում է նոր մտածողութիւնը արեւմտեան ընկերվա-
րութեան մէջ։ Իր տեսական ու գործնական փիլիսո-
փայութեամբ նա կանգնում է այն ճանապարհի վրայ,
որով վաղուց է վեր գարգանում է Ն. Յ. Դաշնակցու-
թեան միտքը։ Այսինքն՝ ընկերվարութիւնն է մարդու
համար և ոչ մարդը՝ ընկերվարութեան։ Մարդ անհա-
տը դուրս է գալիս ընկերային ջրաղբյուրի կոյր տարբե-
րէց և դառնում կենսից միջէ ոյժ։ Ընկերվարական
գաղափարաբանութեան նոր լոյսի տակ առանձին փայլ
ու կենդանութիւն է ստանում Հ. Յ. Դաշնակցութեան
աշխարհայեացքը։ Կատարած վերագնահատմանե-
րէց ամենից ջիշ ազդում է մեր ծրագրը, որ կենսից
փորձի Հիման վրա ստաննելի տարիներ առաջ նախա-
տեսել է այն, ինչին այսօր յանդում է եւրոպական ըն-
կերվարութեան նոր միտքը։

Ս.

ՐԱՌԻԵՐԸ ԵՒ ԱՂԼԵՐԸ ԲՈՒՇՆԵՒԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Աշխարհի ընկերվարական կարծիքը Ռուսաստանում
տեղի ունեցող դէպքերի հանդէպ, անհամուր գծերով,
բաժանած է երեք մասի։ Մէկը՝ ընկերային հակա-
ռակիդները, որոնց համար բոլշևիզմը զարարուն և ամե-
նափառ տեսակի հակայեղափոխութիւն է, որի դէմ
ամէն մէկ գիտակից և բարեխիղճ ընկերվարական պար-
տաւոր է կուել. որքան շուտ տապալի Ստալինեան
բունակարութիւնը, այնքան բաւ ջաղաքակրթութեան և
ընկերվարութեան համար։ Այս քանակի ամենահետե-
ւողական ներկայացուցիչը Կարլ Կաուցկին է։

Միւս կողմից գոյութիւն ունի տրամագծօրէն հա-
կատակ վերաբերում. բոլշևիզմը մարքսեան ընկերվա-
րութեան գործադրութիւնն է կենսից մէջ, մի հոյա-
կապ ու հերոսական փորձ ընկերվարական կարգերի
հաստատման՝ Ռուսաստանի պէս յետամնաց մի եր-
կրում։ Այդ փորձը օգտակար է և անհրաժեշտ ընկեր-
վարական շարժման համար։ Համաշխարհային աշխա-
տաւորութիւնը թող չպիտք է տայ, որ արտաքին որևէ
ոյժ խանդարէ նրա գարգազման ընթացքը։ Ճիշտ է,
Եւրոպայի համար ստալինեան վարչամէր ընդունելի
չէ։ Եւրոպայ ունի սեփական ուղիներ, թայց Ռուսաս-
տանի յատուկ պայմանները անխուսափելի են զարձնում
բեռնութիւնն ու արտակարգ միջոցները։

Վերջապէս, կայ և մի երրորդ մտայնութիւն, որ
տատանում է առաջին և երկրորդ տեսակէտների մե-
ջև՝ երբեմն մօտենայով մէկին, երբեմն՝ միւսին՝ ըստ
հանգամանքների։ Սրանց շարքերից են դուրս գալիս
այն ոչ-փոքրաթիւ գրողները, որոնք այս կամ
այն դէպքի ազդեցութեան տակ, անկեղծօրէն կամ որոշ
հաշուով, շատադարձ են դառնում Ստալինեան բեժիմի,
թէև շատ յաճախ էլ լքում են նրան։ Սրանք, սովորա-
բար, դուրս են գալիս Ռուսաստան այցելող և բոլշե-

ւիկներից հերքախնդրած ճարտիստներին՝ կամ եւրոպա-
կան ապստամբ ընկերվարականներէ շարքերից։ Եւրո-
պական ապստամբութիւնը պարտաւորեցնում է, հո-
ւանաւորողի դերք թունկ բոլշևիկների նկատմամբ։

Մտքերի այս շերտաւորումը «բոլշևիկեան հակա-
տում», քննականաբար, գոյութիւն ունի և Ընկերվարա-
կան Միջազգայինի յարած կուսակցութեանց շարքե-
րում։ Դրանով է բացատրւում այն փաստը, որ Ընկ.
Միջազգայինը երբեք յատուկ ու հետևողական ուղեգիծ
չբռնեց բոլշևիկների վերաբերմամբ։ Կաուցկու տեսա-
կէտը տիրական չդարձաւ, ոչ էլ հակառակ վերաբե-
րումը։

Այս տարատմութիւնն ու անորոշութիւնը, ի հար-
կէ, շատ է վնասում այն պայքարին, որ Խորհրդ. Մի-
ութեան հակաբոլշևիկ տարբեր միտքն են բոլշևիկեան
բունայեթութեան դէմ։ Այս տեսակէտից վերին աստի-
ճանի ուշագրու է այն դերքը, որ վերջերս բռնեցիմ
արեւմտեան ընկերվարութեան երկու ականաւոր գէմ-
բերը՝ Օթթօ Բաուէր և Ֆր. Ալլէրը։

Օթթօ Բաուէրը Վիէնայի «Կամպֆ» ամսագրի
ղեկտեսքերի համարում գետեղեց «Ռուս սոցիալ-դեմո-
կրատիայի ապագան» վերնագրով մի յօդուած, որի մէջ
վերաքննում է ընկերվարութեան դերքը բոլշևիզմի
հանդէպ և ռուս ընկերվարականների առջև պարզում է
գործունէութեան նոր ուղիները։ Ինորոյն այն է, որ
Բաուէրը ո'չ միայն օրակ գործելակերպի տեսակէտից
է մօտենում նիւթին, այլ և սկզբունքային Հիմնաւո-
րումներ է առաջ բերում։ Նա ամբողջապէս սխալ է
համարում ռուս սոցիալ-դեմոկրատիայի մինչև այժմ
ունեցած դիրքաւորումը. հնգամայն ծրագրի կատարած
փոփոխութիւններից յետոյ կարելի՞ է կենալ հին դեր-
քերի վրա։ «Երբ հնգամեակը հրապարակուեց, գրում է

նա, մեզնից շատերը պարզապէս ցնորք էինք համարում այն: Այժմ արդէն դիտեմք, որ թէև ծրագիրը պէտք եղաւ մի քանի անգամ փոխել և նա 100 տոկոսով չէ իրականանալու, բայց և այնպէս, նրա հետեանքն է լինելու ուսակական արդիւնաբերութեան արտակարգ ընդարձակումը, ուսակական արտադրական ուժերի կարողութեան զարգացումն ու ռուս աշխատանքի շօշափելի աճումը: Հնդամեակն, ի հարկէ, ինչոք չափով կը դործարարի և, ուրեմն, ահապէս յետադրում առաջ կը բերէ խորհրդային արդիւնաբերութեան մէջ:

Նոյնը և երկրագործութեան ընդհանուրում: Ընդուն է, «ելոխոյնների ներքին դժարութիւնները» շատ մեծ են, բայց և այնպէս ուսակական երկրագործութեան արտադրական կարողութիւնը աճում է, և ժողովրդի կեանքը հետզհետէ սկսում է բարելաւել: Եւ այս մշտփերը յայտնում են այն ժամանակ, երբ ապրուստի պայմանները տարապայմանօրէն ծանրացել են խորհրդային աշխարհում:

Այսպիսի պայմաններում, կարծում է Բաուէրը, անհնաւանական չէ, որ հնդամայն ծրագիրը իրականանայ, «եթէ յառաջիկայ երկու տարիների ընթացքում այս իրականացումը շնանալարի գանձաւանդների բռնի ընդդիմութեամբ կամ պատերազմական դէպքերով»: Հնդամեակի իրականացման դէպքում առաջ կը գայ մի մեծ պետութիւն, «որի մէջ արտադրութեան մեքենան կը պակասի այլևս ոչ թէ սեփականատէրերին, այլ պետութեան»: Մի պետութիւն, որի մէջ կիրականացւին ընկերվարական հասարակարգի էական տարբերը:

Ընդուն է, այլ շատրերը դեռ ընկերվարութիւն չեն, որովհետև «ընկերվարութիւն նշանակում է ժողովրդի ինքնորոշում աշխատանքի և տնտեսութեան ընթացքում», այսինքն՝ անհրաժեշտ է, որ շարտադրութեան տէր հանդիսացող կառավարութիւնը ազատօրէն ընտրէ ժողովրդից և պատասխանատու լինի նրա առջև, բայց Բաուէրը տեսնում է, որ «Վորհրդային Միութեան մէջ, մեր կողմից առջև աճում են ընկերվարական հասարակարգի տարրերը»:

Արդ՝ այսպէս ընդունելով խորհրդային ըստիմի ներկայ աստիճանը՝ ի՞նչ քաղաքականութեան պէտք է հետեւել նրա վերաբերմամբ: Ետորանակել մտածել բռնի տապալման մասին: Այլ դէպքում — Բաուէրը համոզում է — անտնտեսիփորէն առաջ կը գայ մի նոր քաղաքացիական պատերազմ, որի ընթացքում «է՛ն տարաջ քաղաքացիական կռիւներից, սովից, զրկանքից ու ահաբեկումից» քաղաքում ռուս զիւղացիութիւնը արեան մէջ կը խեղդէ երկիրը և կոչնչացնէ «ընկերվարական կարգի բոլոր այն տարրերը, որոնք ձեռք են բերում անհնարին թանգ դնով»: Տիրող զիւղատուրային տապալումով երկիրը կանցնի զիւղացիութեան ձեռքը, իսկ ռուս զիւղացիութիւնը, ի հարկէ, կը հաստատուի ֆաշիստական կարգի:

Գիւղացիական զիւղատուրայի ուրախանը հարկադրում է Բաուէրին որոնել «ուրիշ, աւելի հաստատուն կը Վորհրդը. Միութեան ռազմավարացման»: Միակ հնարաւոր ելքը, նրա համար, ներկայ զիւղատուրայի շարունակութիւնն է: Ոչ թէ տապալել, այլ պահել ու արժանացնել է հարկաւոր Ստալինեան զիւղատուրային, որ բանւորութեան ու զիւղացիութեան միջև հասարակարգութիւնն ապահովող միակ ոյժն է: Միայն զիւղատուրային կարող է հարկադրել ռուս զիւղացիներին՝ տրամադրել բանւորութեան անհրաժեշտ նկատում մթերքները: Միև կողմից, միայն իր տնտեսութեան կարող է ստիպել բանւորներին՝ գոհելու իր ոյժն ու կարողութիւնը յօգուտ երկրի ճարտարաբանտնայում: Եւ երբ արդիւնաբերութիւնը դարձանայ այնքան, որ ի վերահսկել կը լինի երկրին տալու անհրաժեշտ համարում նիւթերը, խկ, միւս կողմից, երկրագործութիւնը դարձանայ այնչափ, որ տայ հաստատու մթերքներ — զիւղը և քաղաքի միջև կը հաստատուի բնականոն յա-

րաբերութիւն, զիւղացին յօժար կամ ջով մթերք կը տայ քաղաքային ապահովների փոխարէն, և քաղաքների փոխանակութիւնը արդիւնաբերական բանւորութեան և զիւղացիութեան միջև այլևս պէտք չի ունենայ բռնի մնչման երկու դասակարգերի միջա: Որով և շատութեամբ, ջալլ առ ջալլ կը թուլացնի զիւղատուրայի կապանքները, ստանց որ նման թււացումը առաջ բերէ տարեբային վարքի բնկոտները, որոնք կը սպառնան տիրող կարգի հետ մէկտեղ կործանել նաև ապագայ ընկերվարական կարգի տարրերը:

Այստեղից և՛ խրատ ռուս ընկերվարականներին. «ո՛չ միայն չպէտք է կուռլ բողեկիկեան զիւղատուրայի դէմ, այլ և հարկաւոր է արկացել նրա «ընկերվարական շինարարութեան», նեղուկ հանդիսանալ նրան: Ճիշտ տնտեսական դործատնութիւնների իրականացումով զիւղատուրային ինքը ստեղծում է նախաբեկանքը իր ստալինական յաղթահարման համար, ստանց որ միւս ժամանակ կործանւեն իր դործունէութեան ընկերվարական հետեանքները»:

Անուշտ, Բաուէրը դիտէ, որ, վերջ ի վերջոյ, պէտք կը լինի և աւելի վճռական ջալլերի դիմելու, որովհետև, ի հարկէ, զիւղատուրային յօժար կամ ջով իր տեղը չի գիշի դեմոկրատիային, բայց դրա ժամանակը կը հասնի այն ժամանակ, երբ տնտեսական նախադրեանքի անվթարութիւնն այլևս ապահովւած կը լինի: Իսկ մինչև այդ: Մինչև այլևս ռուս բանւորներն ու ռուս ընկերվարականները չպէտք է խանդարեն բողեկիկեան զիւղատուրայի դործունէութեան: Չպէտք է պահանջեն, որ «զիւղատուրայն անմիջապէս փոխակերպի դեմոկրատիայի»: Պէտք է կոչ անել ռուս բանւորութեան, որ նա այն չափով, որ չափով որ հնարաւոր է տանց զիւղատուրային ընկերվարական հետեանքներին վնասելու, ջալլ առ ջալլ շնայ վերացնել ահաբեկումը, աստիճանաբար ձգտել ռազմավարացնել տիրող կարգը, ջալլ առ ջալլ աշխատել վերականգնել անհատական իրաւունքն ու ազատութիւնը, վերականգնել անհատի հոգեւոր ազատութիւնն ու հասարակութեան ինքնորոշում հաւաքական իրաւունքը»: Սրա մէջ է, ըստ Բաուէրի, ռուս ընկերվարութեան պատմական դերը:

Բոլորովին այլ նախադրեանքներից է մեկնում Փր. Այլերը, որ նոյն կամպոյֆի յուշարի համարում «Ստալինեան փորձն ու ընկերվարութիւնը» յօդաւորով քննութեան է առնում Ս. Բաուէրի յարուցած խնդիրները: Նա աւելի իրատես է և չի սղեւորած բողեկիկեան «հրահամակեցիներով»: Նա համոզում է, որ այդ հնդամեակից բան դուրս չի գայ, ոչ էլ բողեկիկեան ընկերվարական տարրերին է հաւատում: Ընդհակառակը, նա շատ լաւ գիտէ, որ «Ստալինիզմի ճակատագիրը ընկերվարութեան ճակատագիրը չէ»: Նրա կարծիքով «Ստալինեան փորձը սոսկ ճարտարաբանտնայում է դրամագլխի նախնական կուսակցական միջնորդ, ստանց մասնաւոր դրամատէրերի մասնակցութեան»: Ստալինեան փորձը հնարաւոր է «միայն քաղաքը ու զիւղի բնակիչները գանձաւանդային սոցիալիզացումով»: Ռուսաստանի ժողովուրդների ներկայ սերունդը զոհաբերում է ճարտարաբանտնայում թափին միշտ այնպէս, ինչպէս կատարում է դրամատիրութեան ծագման օրերին»: Առանձնապէս սարսափելի է շահագործումը զիւղում. «զիւղացի բնակչութեան շահագործման հնարաւորութիւնը հասնում է առաւելագոյն չափի»:

Այս գրութիւնը ստեղծել է իբրև հետեանք բողեկիկեան զիւղատուրայի: Դրամատիր դասակարգը Ռուսաստանում վերացւած է, բայց նրա սեղր գրաւել է պետութիւնը. «մասնաւոր դրամատիրութեան տեղը բռնել է ոչ թէ ընկերվարութիւնը, այլ պետական դրամատիրութիւնը»: Ընդուն է, Ստալինը հաստատում է «ծրագրւած» տնտեսութիւն, բայց միայն ծրագիրը բաւական չէ տնտեսութիւնը ընկերվարական համարելու համար. «ընկերվարութիւնը կարելի չէ երեւակայն

առանց ճարտարաբանացման ու ծրագրած տնտեսութեան, բայց ճարտարաբանացման ու ծրագրման ձեռնարկերը դեռ չի ապացուցանում, ընկերվարութեան գոյութիւնը: «Հնարամիջ ծրագրերը — յաճողի նա թէ ոչ — դեռ ճառ ընկերվարութիւն չէ: Ճորձք է կարծել, թէ «ընկերվարութիւնն այնտեղ (Ռուսաստանում) արդէն իրականացած է և կամ թէ՛ թաւական է զրկանք կրել մէկ կամ երկու հնգամեակի ընթացքում, որպէսզի կարելի լինի նախադրեալներ ստեղծել ընկերվարութեան իրականացման համար»:

Աղէքը, հակառակ Բաուէրի, դիտէ նաև, որ «տնայինեան փորձը» բխում է լոկ քաղաքական հիմքերից: Ի հարկէ, եթէ 1918-19 թւականներին համաշխարհային յեղափոխութիւնը յաճողէր, «ոչ լինինք, ոչ էլ ուրիշ մի բուշնիկ մտքով կանցնէր սովով ու բռնութեամբ, նոսրանակ կուտանքն միջոցներով ճարտարաբանացնել Ռուսաստանը»:

Բայց և այնպէս, այս բոլորը դիտնալով հանդերձ, և հակառակ իր «տեսական հիմնաւորումների տարբերութեան», Աղէքը յանդում է նոյն եզրակացութեան ինչ որ և Ս. Բաուէրը. «ուս ընկերվարականները պէտք է բացայայտորէն որդեգրեն հանդուրժանքի քաղաքականութիւն բուշնիկեան տիրապետութեան վերաբերմամբ»: Ինչո՞ւ: Ռոպոշնու Աղէքն էլ Բաուէրի պէս համոզւած է, որ «բուշնիկեան տիրապետութեան տապալումն այսօր կը բերէ ոչ թէ ուսմակարութիւն, այլ սպիտակ հակախեղափոխութիւն»: «Հնամենակի յաճողութիւնը» դեռ ընկերվարութիւն չի նշանակում, բայց բուշնիկեան տիրապետութեան տապալումը, իբրև հետևանք Ստալինեան փորձի անյաջողութեան, ազատ կը լինի բոլոր երկրների ընկերվարական շարժման համար»: Ուստի, ուս ընկերվարականները պէտք է բուշնիկեան վերջ տան հակաբուշնիկ պայքարին և «հանդուրժանքի քաղաքականութիւն» որդեգրեն Ստալինեան միահեծանութեան նկատմամբ:



Մենք աշխատեցինք, ըստ կարելւոյն, հարազատորէն ներկայացնել ընկերվարական երկու զեկայւար գործիչներին մտքերը: Դրանցից մէկը — Յ. Աղէքը — ընկերվար-Միջադարձի բարոտաբան է, հետևաբար նրա, թէ՛ կուղ և անձնական պատասխանատուութեամբ արտայայտած գաղափարները, կարող են որոշ անբարաբարձում ունենալ աշխատանքային լայն շրջանների մտքերի վրա: Որքան հիմնաւոր է նրանց պաշտպանած նոր տեսակէտը: Արդեօք նրանք էլ զոհ չե՞ն ժամանակի ոգուն և իրենց ընկերվարական կուղ զարքներ ազդեկարարներին:

Օթթօ Բաուէրը զէթ հետնողական է ինքն իր մէջ: Նա ինչ որ «ընկերվարական տարրեր» է տեսնում Ստալինեան «շինարարութեան» մէջ, և քնական է որ մտահոգւած է այդ տարրերի վիճակով: Ելինք թէ «սպիտակ հակախեղափոխութիւնը» յանձին դիւղայիական Փաշիգամի դայ ու ոչնչացնէ: Աղէքը այդ «միթարութիւնն էլ չունի». նրա աչքում Ստալինեան ընթիւր ամէն շարքից մարմնացնում է և ընկերվարական տեսակէտից արժէք չի ներկայացնում, բայց հարկաւոր է «բոլոր երկրների ընկերվարական շարժման համար»: Նա գիտակցօրէն զոհ է բերում իրօճը: Միութեան 160 միլիոնոց ազգաբնակչութիւնը ի փառս «բոլոր երկրների ընկերվարութեան յաճողութեան»... Բարոյական ի՞նչ դարձուրել անկման է հասել յետպատերազմեան մարդկութիւնը, երբ նրա լայնագոյն ներկայացուցիչներն անզամ ընդունակ են արտաբերի հոտենտոտեան առաքելութիւններ երևան բերել...:

Վէճը Յր. Աղէքի հետ ապարդիւն է. նա հենց իր առաջ բերած փաստերով ու բանավարութիւններով խախտում է այս շատագոյամ գաղափարի հիմքերը: Ռոպոշնու, և թէ՛ բուշնիկը այդքան վատ է, ինչպէ՞ս կարելի է այդ չարիքի յարատևումով դիւրացնել «բոլոր երկրների ընկերվարութեան յաճողութիւնը»: Չէ՞ որ ընկերվարական պիտանք կրող հակախեղափարական ընթիւր գոյութիւնը ինքնին արդէն ընդհանուր ընկերվարական շարժումը վարկաբեկող երևոյթ է: Պարզ տրամաբանութիւնը ասում է, թէ որքան շուտ վերացի այդ վարկաբեկումը, այնքան լաւ կը լինի ընկերվարութեան համար:

Բայց Յր. Աղէքին սարսափեցնում է «սպիտակ հակախեղափոխութիւնը»: Այս բանում մեղաւոր են, ամենից առաջ, ուս սոցիալ-դեմոկրատներն իրենք, որ տարիներ անընդհատ կրկնում էին նոյն վայրը. չպէտք է բռնի ուժով ստապել բուշնիկներին, որովհետև տեղը կը դայ Բոնապարտը և զիւղացիական բռնացքով կը հաստատէ սպիտակ դիկտատուրայի իշխանութիւն: Եւ այժմ ա՜նա վայելում են իրենց ցնամայ պտուղները՝ ստիպւած լինելով պաշարել Աղէքների դէմ, որոնք բառացի կերպով կրկնում են իրենց երկկայ բուքերը: Այն, ինչ որ ուս սոցիալ-դեմոկրատներին համար էլ արդէն դարձել է հնացած կամ, ա՛նուցն, վիճելի ճշմարտութիւն, այժմ սկսում են պաշտպանել Աղէքներն ու Բաուէրները: Արդե՞օք վախ կայ, որ բուշնիկ-մի տապալման դէպքում անպատճառ Փաշիգամ պիտի յաճողէ: Բուշնիկներին ձեռնառն է, որ այդպէս մտածելի, բայց իրականում ո՛չ մի տեսլ չի արդարացնում այդ վայրը: Որ բուշնիկմի տապալմանը կարող է յաճողիկ դիկտատուրական ընթիւր կրող մի իշխանութիւն, այդ հնարաւոր է և նոյն իսկ հասանական, բայց որ այդ իշխանութիւնն անպայման պէտք է լինի «սպիտակ հակախեղափոխութիւն», ոչ մի փաստով չի հաստատուում: Աւելի ենթադրելի է ճիշտ հակառակը. դիկտատուրան այնքան է վարկաբեկել իրեն, ժողովուրդը այնպէ՛ս մեծ ծարաւ ունի քաղաքացիական ազատութիւնների, ուսմակարութեան պահանջը այնչա՛փ ուժեղ է ամենքի հոգում, որ ամենայն հասանականութեամբ, բուշնիկմից յետո՛ւ, անմիջապէս կամ աստիճանաբար, կը հաստատուին ուսմակարական կարգեր:

Անհիմն է նոյնպէս և Ս. Բաուէրի տեսակէտը, թէ Ստալինեան փորձերի մէջ կան ինչոր «ընկերվարական տարրեր»: Ռոպոշնու են այդ տարրերը. ծրագրւած տրեստութիւնը, բայց այն ժամանակ զեմանական տնտեսութիւնն էլ պատերազմի ընթացքին, որ նոյնպէս խիտ ծրագրի էր ենթակայ, ընկերվարական տնտեսութիւն էր: Ռոպոշնու ծրագրւած է և այսօրայ դրամատիքական տնտեսութիւնը իր թրջստներով, կարտելներով ու միջազգային համաձայնութիւններով: Այս տեսակէտից, ի հարկէ, Աղէքը աւելի մօտ է իրականութեան. Ստալինեան ընթիւր գոտարին «պետական կապիտալիզմ» է. դրամատիքով տեղը բռնել են պետութիւնն ու կոմկուսը. աշխատանքի և դրամագոյլի փոխարարութիւններն ըստ էութեան նրանք են ինչ որ և դրամատիքական աշխարհում, միայն աւելի վատ հետևանքներով: Այս դրուքիւնից մինչև ընկերվարութիւն աւելի մօտ չէ, քան, օրինակ, ամերիկեան դրամատիքական տնտեսութիւնից մինչև հասաքական տնտեսութիւն:

Այս բոլորը տարբարական բաներ են, բայց սարքական բաներն էլ, ըստ երևոյթի, դառնում են խիտ քարշ, երբ մէջտեղ են գալիս յետին հաշիւներ: Ենկարդ դէպքում, յետին հաշիւը այն է, որ իրօճը: Միութեան աշխատանքային նահատակութիւնը անհրաժեշտ պայման է համարուած Եւրոպայի ընկերվարութեան զարգացման համար:

ՀԻՒՍԻԱԾԵՂԷՆԻ ՃԱՐՏԱՐԱՐԻԵՍԱԸ ԹԻՒՐԳԻԱՅՈՒՆ

Ինչպէս յայտնի է, 1927թ. Թիւրքիայում կատարուեց արդիւնաբերական ընդհանուր վիճակագրութիւն: Այդ վիճակագրութեան արդիւնքը, որ կարևոր նիւթ է Թիւրքիայի զարգացման առիճանը, ուղիներն ու թափը բնորոշելու տեսակէտից, մեր մասնալի կողմից գրեթէ ի նիստի առնւած չէ: Օտար գրականութեան մէջ էլ շատ քիչ բան կայ նրա մասին: Պատճառը, թե՛րևս, այն է, որ վիճակագրական նիւթերը հրատարակւած են թիւրքերէն լեզուով և, ուրեմն, չտարբերն մտաչելի չեն: «Նար Արևելի» (№ 28, 1930թ. Մոսկւա) պարբերականում տպւած է այդ վիճակագրութեան հիւսւածեղէնի ճարտարաբանական վերաբերող մասի ամփոփումը, որ աւելորդ չենք համարում ներկայացնել մեր ընթերցողներին:

Հիւսւածեղէնը թիւրք արդիւնաբերութեան մէջ բռնում է բաւական կարևոր տեղ. նրան պատկանում է արդիւնաբերական ձեռնարկութիւնների 14,34% (9,353 միլիարդ), աշխատող ձեռքերի 18,7% (48,025 մարդ). սպառում է երկրի օդադործած արդիւնաբերական հում նիւթի 17,1% (չարժիչ ուժով բանող ձեռնարկների 8,7% (241) և վերջիններիս մեքենայական ուժի 9,69% (15,855 ձիու ոյժ) բռնւած է հիւսւածեղէնով:

Առհասարակ, Թիւրքիայում գերակշռող տեղ զբաղւող արդիւնաբերական մանր տիպի ձեռնարկութիւններն են: Հետեւեալ աղիւսակը բաւական ցայտուն կերպով հաստատում է այդ փաստը.

Ձրաղւած է մէկ ձեռնարկում	Գնակ	Ամբողջի տոկոսը
1 մարդ	3,020	32,29%
1 մարդ ընտանիքի անդամների հետ	539	5,76%
2 և 3 մարդ	3,335	35,66%
4 — 5 ,,	1,310	14,01%
6 — 10 ,,	714	7,63%
11—20 ,,	223	2,38%
21—50 ,,	116	1,24%
51—100 ,,	36	0,39%
100-ից աւելի մարդ	60	0,64%

Ձեռնարկութիւնների 38% զործում է առանց վարձու ուժի, իսկ 57%ը՝ ունի 2-10 աշխատուոր: Ուրիշ խօսքով, գերիշխողը արհեստաւորական տնտեսութիւնն է, ի հարկէ, նահապետական ձեռքով, նախնական կարգերով ու բարբերով:

Ոչոք կամ գործարանային ճարտարաբանստը, հա-

մեմատարը, զարգացած է երկրի արևմտեան նահանգներում և զբաւում է հիւսւածեղէնի ողջ արդիւնաբերութեան 5%ը, սակայն, այս 5%ում համարում է աշխատող ձեռքերի 46%ը (22,000 մարդ) և ամբողջ մեքենայական ոյժը (15,855 ձիու ոյժ):

Թէ ի՞նչ մեծութիւն են ներկայացնում այս գործարանները, ցոյց է տալիս շարժիչ ուժի հետեւեալ դասաւորութիւնը.

Շարժիչի տեսակը	Գնակ	Ձիւ ուժի քանակը
Ջրային	33	1,008
Շոգեշարժ	68	7,871
Գազի	2	83
Քարիւղի	112	3,953
Ելեկտրական	305	2,940
Գումար	520	15,855

Ուրիշ խօսքով, մեծութեան տեսակէտից առաջին տեղը զբաւում են շոգեշարժ գործարանները: Ոչոք գործարանների քանուորների միջին թիւը 180 հոգի է, մինչդեռ, օրինակ, Ռուսաստանում, որ դեռ շատ հետու է եւրոպական ճարտարաբանութիւնի զարգացման աստիճանից, այդ թիւը հասնում է 1500 հոգու:

Հիւսւածեղէնի ճարտարաբանութիւնն առաջին ձեռնարկները դրնում են Արդիւնաբերական և Հանքային Իրամատան ձեռքին: Նրա հաջորդէոյի կտուր գործարանը 1927թ. արտադրել է 848,172 մետր կտու, 570 տոն պարան, 16,6 տոն թել և 445,2 տոն դերձան: Հերէքի գործարանի արտադրութեան արժէքը նոյն թականին հասաւ էր 572,830 լիւրայի: Վերջապէս, Դէֆտէրդարի գործարանի արտադրանքը արժէք 587 չ-287 լիւր: Իրամատանը մասնակցում է հիւսւածեղէնի և ուրիշ ձեռնարկութիւնների մէջ:

Ձմիւնիայի խոշոր գործարանների մեծ մասը պատկանում է օտարներին: Իրանցից լիւնեք «Société des Tissus de coton» գործարանը 1250 ձիւ ուժի շարժիչով և 450 քանուորով. «Société Anonyme Turque Industrielle d'Orient»-ի մասնաբեր 384 քանուորով, 800 ձիւ ոյժ շարժիչով և 1,440,000 լիւրայի տարեկան արտադրանքով. Հաճի Եսվաշ եղալյիների գործարանը 453 քանուորով: Կան և մի շարք խոշոր գործի ու մետաքսեղէնի գործարաններ:

Հետաքրքրական է, ի՞նչ ճիւղերի է բաժանւում Թիւրքիայի հիւսւածեղէնի ճարտարաբանստը: Հետեւեալ աղիւսակը տալիս է այդ հարցի պատասխանը.

ձիւղերի անուններ	Ձեռնարկների քանակ	Ձրաղւած	մարդկանց քանակը
1. Բուրդի նախնական մշակութիւն, մաքրելու և ներկելու	54		336
2. Բուրդի մամարան և գործածել	136		1,068
3. Բամբակի նախնական մշակութիւն	325		6,309
4. Բամբակեղէն գործող ձեռնարկներ	975		4,398
5. Մետաքսի բոժոժի տեղադրում ու չորացում	44		481
6. Մետաքսի նախնական մշակութիւն ու ներկ	31		1,408
7. Մետաքսեղէնի գործածման	76		1,000
8. Վուշի, կանեփի նախնական մշակութիւն և վարան հիւսել	383		843
9. Վուշի, կանեփի գործածման	14		58
10. Թաղիքի պատրաստութիւն	4,606		1,324
11. Դեղձակի արհեստանոց	666		14,205
12. Գլխարկագործութիւն	242		1,011
13. Հագուստի զանազան մասեր	238		1,667
14. Գորգագործութիւն	141		9,167
15. Անկողնի պատրաստութիւն	334		564
16. Լացարան և ներկարան	115		264
17. Այլ իրեր մետաքսից, բրդից, բամբակից և այլն	297		1,262
18. Չանազան հիւսւածեղէն ձեռնարկներ	676		2,670
Գումար	9,353	48,025	

Այս աղիակից երևում է, որ 6,453 ձեռնարկու-
թիւն 19,713 աշխատատեղերով գործազուրկ է կարգ գոր-
ծով: Երկրորդ տեղը բռնում է գորգագործութիւնը —
141 ձեռնարկութիւն 9,167 մարդով: 59 ձեռնարկու-
թիւններում աշխատողների թիւն է 1-6 մարդ, մնացած
82ի մէջ՝ 6-ից աւելի: Ամենախոշոր գորգագործարան-
ները, բացի մէկից, պատկանում են օտարներին: Ըստ
Զմիւռնիայի Առեւտրոս - Արդիւնաբերական Պալատի
տւեայնեբի, 1914թ. կար 7,685 գորգագործական դադ-
դեան, որոնց վրա աշխատում էր 21,407 անուր,
մինչդեռ, ինչպէս տեսանք, 1927թ. ընդհանուր վիճա-
կագրութիւնը ցոյց է տալիս 9,167 մարդ: Տարբերու-
թիւնը, երևի, նրանից է, որ Պալատը հաշու է և տնա-
յին արտադրութիւնը, մինչդեռ վիճակագրական վար-
չութիւնը ի նկատի է ունեցել միայն գործարանային և
արհեստանոցային արտադրութիւնը:

Մետաքաղտնութիւնը կենտրոնացած է, գլխա-
տրապէս, Բրուսայի շրանում: Բրուսա թաղաքում կան
մի քանի խոշոր գործարաններ, որոնցից հինգ ամենա-

խոշոր պատկանում է Էւրոպացիներին (չորսը Փրան-
սական):

Մետաքաղտնութիւնը առանձնապէս ընկած է:
Այսպէս, 1913թ. Բրուսայում կար հում մետաքս պատ-
րաստող 41 ձեռնարկութիւն 3,648 աշխատատեղերով,
իսկ 1927ին՝ 13 ձեռնարկութիւն 1,120 աշխատատեղով:
Մետաքսի գործածք արտադրող գործարանների թիւը
1913ին՝ 6 էր, որոնցից միայն 4ի մէջ աշխատում էր
781 մարդ: 1927ին կար 5 գործարան՝ ընդամենը 105
գործատուով ու պաշտօնեայով:

Հիւսածեղէնի կենտրոններից յիշենք և Ազանայի-
նը, ուր զարգացած է գլխատրապէս բամբակեղէնի
մշակութիւնը, մի քանի խոշոր գործարաններով: Ա-
զանայում կայ 21 ձեռնարկութիւն, որոնց մէջ աշխա-
տում է 1400 մարդ: գործարաններից մէկում հաշուում
է 218 աշխատող, մի ուրիշում՝ 350:

Աւելորդ չենք համարում ստալ բերել և հետեւալ
աղիակը, որ ցոյց է տալիս, թէ որ շրջաններում ինչ
չափով է զարգացած հիւսածեղէնի ճարտարարեւտը:

Շրջաններ	Ձեռնարկների թիւը	% %	Ջրալում մարդկանց թիւը	% %
Անգորայի	757	8.1	2533	5.3
Զմիւռնիայի	1,735	18.6	10,012	20.9
Պոլսի	2,622	28.0	15,002	31.8
Միջերկրականի եզրքի (Ադանա-Մերսին)	873	9.3	7,283	15.2
Կարնի	215	2.3	420	0.9
Տիգրանակերտի	770	8.2	2,944	6.1
Սեւ Մոսլի եզրքի	858	9.2	1,980	4.1
Սրվազի	908	9.7	2,121	4.4
Գոնիայի	616	6.6	5,710	11.8
Գումար	9,353	100.0	48,025	100.0

Այսպիսով, հիւսածեղէնի արդիւնաբերութիւնը
Թիւրքիայում համախմբւած է, գլխատրապէս, հետե-
ւալ շրջաններում՝ Պոլսի, Զմիւռնիայի և Ազանա-
Մերսինի. առաջինում՝ մասնուրի, մետաքսեղէնի,
բուրդի ու կաւուր արտադրութիւն, կարելի գործեր. եր-
կրորդում՝ բամբակեղէնի մշակութիւն: Եր-
կրորդում՝ բամբակեղէնի մշակութիւն:

Պէտք է յիշել նաև Գոնիայի շրջանը իր 5,710
գործատուներով, որոնցից 4,281 հողին ընկնում է
կեսարիայի վրա:

Երկր շրջաններում էլ աշխատողների մեծ մասը
կազմում են կանայք — 52%: Վերջիններես 15%ը

երեխաներ են:

Հետաքրքրական է մեզ համար և այն փաստը, որ
Թիւրքիայի Արեւելեան Նահանգներում, Հայաստա-
նում, հիւսածեղէնի ճարտարարեւտ, ինչպէս, առ-
հասարակ ճարտարարեւտ, գրեթէ զուրկութիւն չունի
— ամբողջի մէկ տոկոսից էլ քիչ քան: Արմանազըւած
215 ձեռնարկութիւններում դրաււած է 420 մարդ, տե-
րերն էլ մէկը հաշուելով: Սակն է զուրկութիւն ունին մի-
այն նահանգան, նահապետական տիպի խեղճ ու կրակ
արհեստանոցներ: Մեր հայրենիքը այս տեսակէտից էլ
ամայի է և շարունակում է սպասել իր իսկական տէրե-
րին:

N° 428 ՈՐՈՇՈՒՄԸ

«Բրոզակի» ընթերցողները ծանօթ են արդէն Համ-
կենտկոմի 1931թ. հոկտ. 31 «պատմական որոշման»^{*)},
որի մէջ առած էր, թէ՛ «Անլրբերկոմը թոյլ է տւել
տարապայման կենտրոնացում Անգրիզովկասեան Դաշ-
նակցութեան տնտեսական ու մշակութային շինարարու-
թեան ղեկավարութեան մէջ»: Այդ կենտրոնացման հե-
տեան ընդ Դաշնակցութեան մաս կազմող Հանրապետու-
թիւնները մի շարք հարցերում դարձել են «բնագործ»,
այսինքն՝ իրաւագործի և անգոյնի: Մոսկուայից արւած
ազգանշանի վրա, Անգրիզովկասում շուտով սկսեց
սխալների գանդաւային սրբագրութիւն: Իբրև առաջին

ջալլ, 1931թ. դեկտ. 11ին հրատարակւեց Անգրիզովկա-
սի Ժողովախորհի № 428 որոշումը, որ կրում է հետե-
ւալ վերնագիրը. «Օպերատիւ փոսկիցիաների սահմա-
նագծումը ԱՍՍՖՁ և նրա համըպտուութիւնների տըն-
տեսական-կոօպերատիւ և կուլտուրական կազմակեր-
պութիւնների ու հիմնարկների միջև»^{**) :}

Ի՞նչ է ստում այս նոյնպէս «պատմական» կողմնու-
արժանի վաւերագիրը:

Նախ՝ հետաքրքրական է որոշման հիմնաւորումը:
Ինչպէս արար, ամենից առաջ մէջտեղ է քաշւում
«հնգամեայ պայան յալդող իրականացումը», այսպ՝ «նոր

*) «Բրոզակ», 1931թ. դեկտեմբեր:

**) «Խորհրդ. Հայաստան», 17 դեկտեմբեր:

ձեռով աշխատելու» պահանջը և, ի վերջոյ, «Տնտեսական կազմող Հանրապետութիւնների օրգանների լայն ինքնագործութիւնն ու տնտեսական նախաձեռնութիւնը ծաւալելու անհրաժեշտութիւնը»: Բոլոր այս պատճառներով որոշում է կենտրոնի ձեռքից առնել մի շարք երաւուցներ ու գործեր և փոխանցել Հանրապետութիւններին, այլ և մի շարք Հանրապետական երաւուսութիւններ ու գործեր յանձնել կենտրոնին: Այսպիսով ենթադրում է ուժեղացնել Անդրֆեդերացիայի օրգանների ղեկավար դերը:

Որոնք են ծրագրած փոփոխութիւնները. ինչպէ՞ս է կատարուած «Փոփոխութիւնների» նոր սահմանազուգումը: Ի՞նչ գործառնութիւններ կենտրոնից փոխանցուած են «Տնտեսական կազմող Հանրապետութիւններին» և ընդհանրապէս: «Որոշումը» առանձին-առանձին թուում է բոլոր դէպքերը:

Ամենից առաջ հրահանգուած է հետեւել փոփոխութիւններն առաջ քաշել ժողովուրդային, այսինքն ժողովրդական Տնտեսութեան Գերագոյն Խորհրդին ենթակա կենտրոնական ձեռնարկութիւնների մէջ:

«Զաւակնեցրալուտ» տրեսայից հանել նախիջնանի և Բազուի աղահանգային ձեռնարկները և յանձնել Ազրբէյջանի ժող. Տնտ. Գերագոյն Խորհրդին:

«Լուծարքէ ենթարկել», այսինքն լուծել «Զաւակնեցրալուտ» տրեսոյ և ստեղծել Հայաստանի, Ազրբէյջանի ու Վրաստանի մտաբարդիւնարեքական տրեսոսներ:

«Լուծարքէ ենթարկել» «Զակնեցրալուտ տրեսոյ» և կազմել Հայաստանի, Ազրբէյջանի ու Վրաստանի «Բարդարեքսոսներ», այսինքն թամալի առանձին մարմիններ:

«Լուծարքէ ենթարկել» «Զակնեցրալուտ տրեսոյ» տրեսոյ և ստեղծել Հայաստանի, Ազրբէյջանի ու կազմել բոլոր Համաբարդարեքական Հանրապետական տրեսոսներ:

«Լուծարքէ ենթարկել» Անդրկովկասեան «Ստոր-մատերիալ» տրեսոյ և ստեղծել Հայաստանի, Ազրբէյջանի և Վրաստանի շինարկութիւն տրեսոսներ՝ կենտրոնական իշխանութեան վերապահելով, սակայն, «ձեռութեանակն և Ֆեդերատիւ նշանակութիւն ունեցող կառուցումների շինարարութիւնն ու նախազուգումը»:

Առաջարկել Հանրապետութեան կառավարութիւններին ստեղծել կազմակերպական մատոսներ, այսինքն՝ մատակարարութեան և աւտոբոյ մարմիններ, բայց «Ֆեդերատիւ և միութեանական կազմակերպութիւնների մատակարարումը», ինչպէս և «Անդրկովկասից դուրս գտնուող շուկաներում մատակարարումը ու փաճառքը» կատարել կենտրոնական մարմինի միջոցով:

Այս ապակենտրոնացման քայլերի հետ զուգընթաց տեղի է ունենում և կենտրոնացում: Այսպէս, ցեմենտի գործը, որի ղեկավարութիւնը մինչև այժմ վերապահուած էր Հանրապետութիւններին, փոխանցուած է կենտրոնին և այդ նպատակով կազմուած է Թիֆլիսում «Զակնեցրալուտ» Անդրկովկասեան տրեսո:

Կենտրոնացուած է ջրիական արդիւնաբերութիւնը նոր ստեղծուող «Զակնեցրալուտ» անունով տրեսոյի մէջ, Թիֆլիսում:

Կենտրոնացուած են հետախուզական և շինարարական մի շարք ճիւղեր, Թիֆլիսում: Գիւղատնտեսական ձեռնարկութիւնների վերաբերմամբ կատարուած են հետեւայ փոփոխութիւնները:

Պահելով հանդերձ Անդրկովկասի կենտրոնը՝ առաջարկուած է կազմակերպել Հանրապետական արակտորական կենտրոններ:

Լուծարքէ ենթարկել «Զակնեցրալուտ» և զելակային շինարարութիւնը կատարել Հանրապետական զելաշինների միջոցով: Բամբակագործական. շինարարութիւնը վերապահել Անդրբամբակշինին:

Յանձնարարել Անդրհողովուրդային Հանրապետութիւններում կազմակերպել Սոյիզնեխոգանարդ Անդրկովկասեան դրասենեակի լիցզօրների ինստիտուտներ, այսինքն՝ պահելով հանդերձ Անդրկովկասի

երկրագործական դործավարութիւնը, կենտրոնացնելով հանդերձ զելաշինութեան տնտեսական մատակարարման գործը, Հանրապետութիւնների մէջ ունենալ լիազօրներ:

Հիմնում է նաև Սոյիզտարակի, այսինքն՝ Համախուժեանական ծխախոտի վարչութեան Անդրկովկասեան բաժանմունք և Հանրապետական լիազօրներ:

Կօպիարատի զժով որոշ ապակենտրոնացման է ենթարկուած Հանրապետական մեծածախ և մանրածախ առևտուրը, սակայն, «վերադարձնելով Անդրմիութեանը սպառողական սխտեմի ընդհանուր ղեկավարումը, պլանատրումը և վերահսկողութիւնը»:

Լուծուած են ստեղծել, քաղաքամերձ տնտեսութիւնների, Հացադրեքական և անտառային կենտրոնական մարմինները՝ նրանց բրաւտութիւնները փոխանցելով Հանրապետական սպառողական միութիւններին:

ԲՈՒՆ-երի (Բարձրագոյն Ուսումնական Հաստատութիւնների) զժով՝ ապահովելու համար «ուսանողները ընկերացումը» և արտադրական բազային մօտեցնելը՝ որոշուած է—

Անդրկովկասեան Ինժիներա-Մեխիոտրեսո Ինստիտուտը վերածել Ազրբէյջանի Հանրապետական Հիմնարկութեան և փոխադրել Գանձակ՝ ղեկելով Անդրբամբակ-միւտրման բիւրօնի մէջ:

Այդ Ինստիտուտ վրացական հատուածը պահել Թիֆլիսում՝ միացնելով Վրաստանի շինարարական ինստիտուտին:

Հայկական հատուածի կամ Հայ ուսանողների մասին խօսք չկայ. երևի, դարապէս, փոքրց են նետուած:

Անդրկովկասեան Կենդանական Ինստիտուտը վերանաւանի Թիֆլիսի Կենդանական Ինստիտուտ՝ պահելով միութեանական բիւրօնի մէջ:

Անդրկովկասեան Բամբակագործական Ինստիտուտը փոխադրել Ազրբէյջան և վերակազմել Գանձակի Բամբակագործական Ինստիտուտի՝ պահելով անդրկովկասեան բիւրօնի մէջ:

Անդրկովկասեան Հանք-Մետաղաձուլական Ինստիտուտը թողնել անփոփոխ:

Անդրկովկասեան Քիմիա-Տեխնոլոգիական Ինստիտուտը յանձնել Վրաստանի «վերակազմելով Թիֆլիսի ջրի-տեխնոլոգիական ինստիտուտը»:

Ազրբէյջանի ջրիական արդիւնաբերութեան համար մասնագէտներ պարաստելու նպատակով բանալ առանձին բարձրագոյն վարժարան:

Վերացնել Անդրկովկասեան Անասարոժական Ինստիտուտը Երևանում և կազմակերպել Երևանի անասարոժական Զօտեխնիկական Ինստիտուտ՝ մըտցնելով Հայաստանի բիւրօնի մէջ:

Անասարոժական-Զօտեխնիկական ինստիտուտներ հիմնել և Վրաստանում ու Ազրբէյջանում:

Պահել անփոփոխ բոյսերի պաշտպանութեան հարաւային ինստիտուտը:

Թիֆլիսում կազմակերպել Թեյատու մշակոյթների ինստիտուտ:

Անդրկովկասեան Տեքստիլ Ինստիտուտը Գանձակում վերանաւանել Գեանջայի Տեքստիլ Ինստիտուտ՝ պահելով Անդրկովկասեան բիւրօնում:

Թողնելով Թիֆլիսում առաջին Անդրկովկասեան Կոմունիստական Համալսարանը՝ կոմունիստական ԲՈՒՀ-եր հիմնել նաև Ազրբէյջանում, Վրաստանում և Հայաստանում:

Կազմակերպել «լուծարքէ յանձնաժողովներ» այս որոշումները դործադրելու համար:

Հետագայ տեղիութիւններից երևում է, որ Յանձնաժողովներն արդէն անցել են գործի. որոշումների մեծ մասը դործադրուած է:

Ի՞նչ են ստում այս որոշումները: Նախ՝ նրանք ամբողջապէս հաստատուած են մեր

քննադատութիւնները Անդրկովկասեան Հանրապետութիւնները իրաւազրկման մասին: Աւելին. նրանք ցոյց են տալիս, որ իրականութիւնը շատ աւելի մտալ է, քան մեր ունեցած տեղեկութիւնները: Գուրու է դալիս, որ նոյն իսկ Կոօպերատու աւետրի, Հացադործութեան կամ անտատապահութեան պէս գուտ տեղական ինդիւրներ կենտրոնացած են եղել Թիֆլիսում: Իմ պերիստիստական ինչ պետութեան ցաղութ ուզում էք առէ՞ք, անհամեմատ աւելի լայն իրաւունքներ ունին, քան Անդրկովկասի «ինքնավար Հանրապետութիւնները»: Տիգրանաւոյնի ստորապետութեան շրջանում անգամ Երեւանի նահանգը տնտեսական նախաձեռնութեան աւելի ազատութիւններ էր փայտում. այժմ մի արտ ցանկու Համար պէտք է դիմել Թիֆլիս...

Երկրորդ՝ ապակենտրոնացման նոր կարգադրութիւններն, ի Հարկէ, որոշ նշանակութիւն կունենան զգո՞հութեան խտացած մթնոլորտը նորացնելու տեսակէտից, բայց նրանց իրական արժէքը չպէտք է չափազանցել: Նրանք ցար չեն բուժում: Եթէ մի կողմից մի շարք իրաւասութիւններ վերադարձւած են Հանրապետութիւններին, միւս կողմից՝ ուրիշ գործեր նորից դրւած են կենտրոնական մարմինների իշխանութեան տակ: Կենտրոնացման սկզբունքը և գործնական քաղաքականութիւնը փոխւած չեն. մի քանի աննշան սրբազրուութիւններ են կատարւած միայն: Փաստորէն Անդրկովկասը, պահելով Հանդերձ Ֆեդերացիա անունը, գտարիւն կենտրոնացած պետութիւն է՝ իր Հերթին կենտրոնացման ենթարկելով Մոսկուայի կողմից: Անդրկովկասեան Հանրապետութիւնները կրկնապատիկ ստրկացւած են:

Իւ, վերաջպէս, երրորդ՝ մի անգամ ևս ամենազարգացող ձևով Հաստատում է այն տխուր իրողութիւնը, որ Հայաստանը արհամարհւած, լքւած ու զրկուած միւտը է Անդրկովկասեան Դաշնակցութեան մէջ: Կարողացէ՞ք մէկ էլ վերջը փար № 428 որոշումը՝ քանի՞ անդրկովկասեան չափանիշով Հաստատութիւն կամ ձեռնարկութիւն է եղել Հայաստանում, չլուծարէ՞ք յետոյ ի՞նչ է բաժնի Հասել Հայաստանին:

Արդիւնարեական, գիւղատնտեսական, Կոօպերատ

տիւ գծով՝ ոչ մի անդրկովկասեան Հաստատութիւն կամ ձեռնարկ չունի Հայաստանում: Ամենքը Համարում լաւուած են Թիֆլիս, Բագու և Նոյն իսկ Գանձակ. Երեւանը Անդրկովկասում դուռուց է սոսկ իբրև աննշան գաւառական կենտրոն: Բնականաբար, այն բոլոր անդրկովկասեան չէնքերը, նոր կառուցւածները, Հաստատութիւնները ղոյնքին ու գործերը, վերջին Հաշուով, պատկանելու են Վրաստանին և Ազրբէյձանին: Հայաստանը բացարձակապէս զրկւած է և անիրաււած:

Անդրկովկասեան նշանակութիւն ունեցող մէկ Երտիկ Հաստատութիւն է եղել Հայաստանում — Երեւանի Անանարուժական Ինստիտուտը, այն էլ որոշել են «լուծարէ՞ք ենթարկել, վերածել Հայաստանի զբաղուցի և դնել Հայաստանի բիւջէի մէջ: Ինժիներա-Միկիորատու Ինստիտուտը փոխադրուած է Ազրբէյձան, բայց ծախք թողւում է անդրկովկասեան բիւջէում. Բամբակադորական Ինստիտուտը՝ նոյնպէս. Տեքստիլ Ինստիտուտը՝ նոյնպէս: Վրաստանում պահւում են մի՞շտք բարձրագոյն վարժարաններ ու Հիմնարկութիւններ՝ անդրկովկասեան բիւջէով հիմնուած են նորերը: Հայաստանում մէկ Հատ անասնաբուժական վարժարան կար, այն էլ «լուծարէ՞ք ենթարկուցին: Մրան ստւււմ են Հաստատութիւն...

Հայ բոլշեակները այս վրդովեցուցիչ անարդարութեան դէմ բողոքելու փոխարէն՝ մեզ են Հայհոյում: Իբր թէ մենք անտեղի պահանջներ ենք գնում, Հրահրում ենք ազգայնական կրքեր: Բայց ազգայնական կրքերը՝ Հէնց Անդրկովկասում տիրող կարգերից են բխում: Ինչո՞ւ կարելի չէ, օրինակ Համար, Տեքստիլ Ինստիտուտը, փոխանակ Գանձակի, ուր տարած են ուրիշ անդրկովկասեան հիմնարկութիւններ էլ, տեղափոխել Լենինական: Եթէ Գանձակում Հիււսածեղէնի գործարան կայ, չէ՞ որ նոյնք կայ և Լենինականում: Եթէ Ազրբէյձանում բամբակ կայ, չէ՞ որ բամբակ կայ և Հայաստանում: Ինչո՞ւ կարելի չէր Թիֆլիսի հիմնարկութիւններից մի քանիսը փոխադրել Երեւան. չէ՞ որ Երեւանը Անդրկովկասի «երրորդ մայրաքաղաքը» է: Ո՞վ է Հայաստանի մասին մտածողը: Հայկումկուտւմ իելլի, խղճի ու նամուտի տէր մարդ մնացել է...

ԿԱՐՄԻՐ ԳԾԻՑ ՆԵՐՄ

(Խորհրդ. Միութիւն և Հայաստան)

ՀԱՄԱԳՈՒՄ ԱՐՆԵՐ

Յունւար և փետրւար ամիսները, Խորհրդային Միութեան սահմաններում, կարելի է ասել ամբողջապէս, կրանւեցին Կոմունիստական Կուսակցութեան կենտրոնական և տեղական Համագումարներով, որոնց կը ներխուժէ մեր այս տեսութիւնը ամբողջապէս:

Համամիութենական 17րդ Համագումարը բացւեց յունւար 30ին, Մոսկուայում և տե՛ս մինչև փետրւար 4ը: Օրակարգի հիմնական Հարցերն էին՝ Օրշոնիկիձէի գեկուցումը. «1931 թւի արդիւնաբերութեան քաղաքացման արդիւնքների և 1932թ. արդիւնաբերութեան ինչ-զերները մասին» և Մոլոտովի ու Կուլիկիի գեկուցումները «երկրորդ Հնգամյակ ծրագրի» հիմքերի մասին: Պէտք է ասել, որ այս անգամ Կոմկուսի Համագումարն անցաւ շատ արագ և Հարթ ու տախակ: Ո՛չ առանձին վէճ, ո՛չ կիրք ու արմուկ, ո՛չ մեծամասնութիւն ու փոքրամասնութիւն: Ինչոր Հարցերն զգարկուցին ճիւղամասնութեամբ:

Ընդունւած երկար բանաձեւերի մէջ գնահատութեան են ենթարկւում Խորհրդային արդիւնաբերութեան ու գիւղատնտեսութեան Հնգամյակ ծրագրի 1931 թւի արդիւնքները, նաճումներն ու թերութիւնները, գծուած են առաջիկայ անխիչները և նոր Հնգամյակի հիմնական ինդիկները: Այսպէսով էլ սահմանափակուած է 17րդ Համագումարի արժէքը:

Համագումարի փակման յաջորդ օրը, փետր. 5ին, գումարուց Կոմկուսի Կենտր. Կոմիտէի ընդհ. Ժողովը, որ Հաստատեց 17րդ Համագումարի բանաձեւերը և Ռուսաստանի փոխարէն, որ ընտրւել էր Կենտր.Վերահսկիչ Յանձնաժողովի նախագահ, Պոլտորեիցի անդամ նշանակեց Ա. Ալդրէյեւին:

Երկու օր յետոյ, փետր. 7ին, տեղի ունեցաւ Համամիութենական Վերահսկիչ Յանձնաժողովի նոր նախագահ Ռուսաստանի գեկուցումը Ժողովրդական տնտե-

տութեան ծրագրի և բանւորա-գիւղացիական տեսչու-
թեան դերի մասին:

Առաջ, Համաժողովեանական Համագումարի նախոր-
դականին, սովորաբար հրահրուում էր Անդրկովկասի
կուսակցական ընդհանուր ժողովով, որ Համագումարի
պատգամաւորներն էր ընտրում և հրահանգներ մշա-
կում: Այս տարին, անդուշտ, իբրև հետեանք ճապա-
հենտրոնական, գումարակցին միայն հանրապետու-
կան ժողովներն և Մոսկու պատգամաւորներն ուղարկե-
ցին անմիջապէս հանրապետական Կոմկուսներին կողմից:
Իրա փոխարէն, յունւ. 25-28ին, Թիֆլիսում Հուաբեց
Անդրկովկասի Կենտրոնական Գործադիր Կոմիտէի եր-
կրորդ նստաշրջանը, որ փաստորէն զբաղեց նոյն հար-
ցերով, ինչ որ և հանրապետական ու կենտրոնական
Համագումարները, միայն տեղական առումով — Ան-
դրկովկասի 1932 թվի ժողովրդական տնտեսութեան
սկիզբի վերջը, պետական բիւզջէն ու ելեմտական մի-
ասնական ծրագրերը, խորհրդային շինարարութեան
խնդիրներն ու խորհրդային վարչութեան ստորին մե-
քենայի ամբապնդումը. հերթական օրէնքների վաւե-
րացում:

Ժողովը ընդունեց Անդրկովկասի 1932թ. տնտեսու-
թեան ծրագիրն ու պետական բիւզջէն: Անդրկովկասի
Ժողովխորհի նախագահ Նշանակեց Մուսաբէգովին,
իսկ Անդրկովկասի Գործադիր Կոմիտէի նախագահ՝
Մէլքիէֆին:

Համաժողովեանական 17րդ Համագումարից առաջ
տեղի ունեցան հանրապետական Համագումարներ: Հայ-
կովկասի 8րդ Համագումարը կայացաւ Երեւանում,
յունւար 17-23ին: Օրակարգի զլիտար խնդիրներն էին
Կենտր. Կոմիտէի և Վերստուպի Յանձնաժողովի գե-
կուցումներն ու հաշւառութիւնները, ինչպէս կենտրո-
նական մարմինների ընտրութիւնը: Օրակարգի հարցե-
րի քննութիւնից յետոյ, ընտրուեց Կենտր. Կոմիտէ՝
բաղկացած 62 անդամով և 21 թեկնածուից և Կենտր.
Վերահսկիչ Յանձնաժողով՝ 63 անդամից:

Համագումարից անմիջապէս յետոյ, տեղի ունեցաւ
Կենտր. Կոմիտէի ընդհանուր ժողովը, որ ընտրեց Բիւր-
ով՝ 13 անդամից և 2 թեկնածուից, քարտուղարութիւն՝
5 անդամից, ձեռնարկ. Հայաստանի խմբագրութիւն և
17րդ Համագումարի պատգամաւորութիւն:

Կենտկոմի նոր Բիւրօի կազմն է՝ Նանջեան, Օթեան
Սեդրեյան, Ակոպով, Գապիկ Մկրտչեան, Անանեան, Տէր
Պարբէրեան, Մարտիրեան, Ինժիրեան, Պետիկ Պետ-
րոսեան, Գուսեան, Ալի Թաղի-Չաղէ, Արուսեան, Գու-
րոյեան. թեկնածուներ՝ Լիպարիտ Բարսեղեան և Վար-
դանով:

Կենտկոմի քարտուղարութիւն — Նանջեան՝ առա-
ջին քարտուղար, Սեդրեյան Օթեան՝ երկրորդ. պարե-
նաւորան քարտուղար՝ Ակոպով, Հարտրակոյութեան
միջոցների քարտուղար՝ Մկրտչեան. քարտուղարու-
թեան անդամ՝ Պետիկ Պետրոսեան:

Ձեռնարկ. Հայաստանի խմբագիր՝ Ընձակ Վա-
հանեան, կազմակերպական-հրահանգչական մասի վա-
րէ՛ն՝ Մկրտչեան, կուլտուրայի վարէ՛ն՝ Արուսեան, Ա-
րիտմաս՝ Անուշան Արքունեան, կազմերի բաժնի
վարէ՛ն՝ Մանուչարեան:

17րդ Համագումարի քառադամաւորներ. ընտրեցին՝
վճարական ձայնով՝ Նանջեան, Օթեան, Գուրոյեան, խոր-
հրդակցական ձայնով՝ Պետիկ Պետրոսեան, Գուսե-
ան:

Նոյն յունւ. 23ին դուսարեց Հայկովկասի Վեր-
ստուպի Յանձնաժողովի ընդհանուր ժողովը, որ ըն-
տրեց նախագահութեան հետեան կազմով. Գալոյեան
(նախագահ), Մարթիեան Մ., Վարպետեան Ա.,
Վինսբէրգ Բոգա, Չարիֆեան Մ., Միքա, Վարդան-
եան, Յովսէփեան Վ. Մուղղուսի, Պոլամիրեան Ե.,
Աղամարեան Ա., Գէորգեան Միսա, Յովհաննիսեան
Ա. Թեկնածուներ՝ Մարգսեան Անահիտ, Եարութիւնեան
Ե., Անտոնեան Գ.

Հայկովկասի Կենտկոմի անդամներ ընտրեցին.
Օրախելաչլիքի, Բէրիտ, Գորոնսի, Ռանջեան, Անան-
եան, բանւոր Արմենակ, Ալի Թաղի-Չաղէ, Արյացեան
Կ., Ակոպով, Գուրոյեան, Գուսեան, Գալոյեան, Մար-
տիրեան Սեդո, Երսիսեան Բ., Օթեան, Վարդանով,
Տէր-Գարբէրէյեան, Գորոնց, Բարսեղեան Լ., Պետրոս-
եան և այլն:

Առաջինը արդէն, որ Համագումարի մեքի կազմում
էր Հայկովկասի քարտուղար Ա. Նանջեանի ընդարձակ
գեկուցումը*), որ շօշափում է Հայաստանի խորհրդա-
յին կեանքի բոլոր կողմերը: Ինչպէս յայտնի է, Հայ-
կովկասի Երիտասարդ քարտուղարը շատ խելք լուսի,
թէ և յաւակնութիւններով հարուստ է: Այդ պատճառով
նրա դատողութիւններն ու եղբակացութիւնները առան-
ձին արժէք չեն ներկայացնում, բայց բերած փաստերն
ու տեղեկութիւնները գուրկ չեն հետաքրքրութիւնից:
Նանջեանի գեկուցման այդ մասը առատ նւթ է տալիս
Հայաստանում տրրոգ պայմանները հասկանալու հա-
մար:

Մի քանի ընդհանուր դիտողութիւններից ու դա-
տողութիւններից յետոյ, Նանջեան գեկուցումն սկսում
է Հայաստանի ժողովրդական տնտեսութիւնից- 1931
թվի երկրի արտադրութիւնը եղել է 187 միլիոն ռուբլի,
նախորդ տարւայ 161 միլիոնի փոխարէն: Եթէ արդիւ-
նաբերութեան մէջ նկատուում է զգալի յառաջդիմու-
թիւն, զիւղամտեսութիւնը. մնացել է մեռած կէտի
վրա: «Վերջին երկուրդը քայտարում է 31 թվի բամ-
բակի բերքահաւաքի պլանի հսկայական թերակատա-
ւումով և, մասնաւոր, այն յակայունութեանը, որ
տիրում էր անասնապահութեան քնապաւառումը»: Եւ,
իրօք, ուրիշ արդիւններից էլ յայտնի է, որ վերջին
մէկ-երկու տարւայ ընթացքին յամբակադործութիւնն
ու անասնապահութիւնը Հայաստանում ունեցել են խո-
շոր «ճեղքած ճեղք» ու «թերակատարումներ»:

Ժողովրդական տնտեսութեան ընթացքի նշանացոյց
է և պետական բիւզջէն, որ զարգացման հետեան
պատկերն է տալիս. մուտքը 1925-26թ.՝ 8 միլիոն ռուբ-
լի, 1926-27թ.՝ 9 միլիոն, 1927-28թ.՝ 12 միլիոն,
1928-29թ.՝ 17 միլիոն և 1929-1930թ.՝ 23 միլիոն: Ել-
քը՝ 1925-26թ.՝ 22 միլիոն ռուբլի էր, իսկ 1929-30թ.՝
65 միլիոն: Բացը զոչուում է «ձեռնարկ. Միութեան մէջ
կիրարկուող լէնինեան ազգային քաղաքականութեամբ»,
բայց Նանջեանը չի քայտարում, թէ Հայաստանից ար-
տաւանուող և Հայաստան ներմուծուող դուսարները ինչ
Համեմատութեան մէջ են: Հայաստանի պղինձը, բամ-
բակը, տուֆը, պէգման, դինքն ու կոնեակը, պահա-
ծոն, ձուկը, կաթնեղէնը, բուրդը ու կաշին և այլ ապ-
րանքներ, որ գրեթէ ձրի տարւում են Հայաստանից,
ի՞նչ արժէք են ներկայացնում: Այն յոյս տակ պէտք
է պատկերացնել լէնինեան ազգային քաղաքականու-
թիւնը»:

«Սոցիալիզմի կատուցումը մեր երկրում առաջ է
գնում վիթխարի քայլերով», հաւատացնում է Հայկով-
կասի քարտուղարը, և ահա փաստը.

1931 թվին Հայաստանի արդիւնաբերութիւնը կա-
տարեց արտադրական պլանը միայն մօտ 80 տոկոսով:
«Մեծ ճեղքած ճեղքով փակեցին 1931 թվի մէք ար-
դիւնաբերութեան կարևորագոյն ճիւղերը՝ պղինձն ու
տեքստիլը»: «Բաւական է ինչի այն անյալողութիւնը,
որ ունեցանք զիւղամտեսական Փրոնտի կարևորագոյն
ճակատամասում՝ բամբակի Փրոնտի»:

Մասնաւորապէս վատ է դրութիւնը պղինձի ճակա-
տում. «Ժողովրդական տնտեսութեան յայպէս կուշած
«վերականգնման» շրջանը թիչ բան տեց մեր պղինձար-
դիւնաբերութեան զարգացմանը», որի հետեանքով
պղինձ արդիւնաբերութիւնը չարգանց յետ է մնացել.
1931ին Ալլաւվերդիի և Լափանի շարժանակներ հասոյ-
թի տարեկան պլանը կատարւել է 74,3%ով: «Ղափա-

*) «Սոցիալ. Հայաստան» 20, 21, 22 յուլետար:

նի մէկ տոն պղինձը պլանով նախատեսւած 1,183 բուր-
ով փոխարէն՝ նստում է մեզ վրա 1,622 բուրջի, այն
ժամանակ, երբ պղինձի վաճառման պաշտօնական գինը
Ռոբորդ. Միութեան մէջ 900 բուրջի է: Հանքերում
բանուորների հաստատում կողմ զորութիւն չունի. «մի
տարւայ ընթացքում մօտ 80%ով փոխուել է Ալլանգիեր-
դու բանուորների կայմը»: «Ձեռք կարող չլեշտել այն
խայտառակ երևոյթը, երբ բնակարանային ծայր աս-
տիճան սուր կրիգիսի պայմաններում պղինձարդիւնարե-
րութեան բնակարանային շինարարութեան պլանը կա-
տարուել է միայն 50%ով»: «Մեր հանքափոր բանուորի
արտադրողականութիւնը 30-40%ով յետ է մնում Ու-
րալի հանքափորի արժագործականութիւնից»: Դրու-
թիւնը համեմատ է այնտեղ, որ ճնախկին ղեկավարու-
թեան ժամանակ մի պահ մտածուած էին պղինձարդիւնա-
րութիւնը նախկին Փրանսացի շահագործողներին
կոնցեսիայով տալու հնարաւորութիւնների մասին»:

Պղնձից ոչ պակաս «խայտառակ» է և բամբակի
վիճակը: «Ձեռքած բամբակի Փրոնտի խոշոր կարևո-
րութեան, չկարողացանք թելի թէ շատ գունացուցիչ ար-
դիւններ ստանայ այս տարւայ բամբակի կամպանիա-
յից: Ընդհակառակը, պէտք է ընդունենք, որ այս գծով
1931 թւին խայտառակ անլալորութեան մասնւեցինք»: «1931թ.
բամբակի յանձնման (զննման) մեր պլանը կա-
տարուեց 41.1%ով, կենտրոնի պլանը՝ 62%ով, ըստ
շրջանների՝ հետֆայ պատկերը. Լամարլուի՝ 51.3%,
Էմբրանիւր՝ 46.5% և Ղուրդուզուլի՝ 28.5%: Ամենից
բացառական երևոյթն այն է, որ թերթատութեան չափ-
ով է բամբակի յանձնման (զննման) պլանի կատարու-
մով կոյտնտեսութիւնները գրաւապէս յետ մնացին ան-
հասական տնտեսութիւններից՝ կատարելով բամբակի
յանձնման պլանի միայն 32.4%ը»:

Եւ ինանջանը բերում է մի շարք փաստեր, որոնք,
իրօք որ, խայտառակ դոշներով են ներկայացնում
բամբակի մշակութեան վիճակը խորհրդային պայման-
ներում: Գիւղացիները բամբակի արտերի վրա նայում
են ուղղակի թշնամու աչքով. շնայած որ «բամբակա-
ցան շրջանների կոյտնտեսականները և աշխատաւոր
գիւղացիութիւնն ստանում են հսկայական օժանդակու-
թիւն և արժօնութիւններ պրոլետարական պետութիւ-
նից, ստանում են էժան գներով արդիւնաբերական ապ-
րանք, հաց, ստանում են լախ վարկաւորում, — դրու-
թիւնը ուղղակի «խայտառակ» է, այնքան խայտառակ,
որ «մէկ հեկտարից հարկ 5 ցենտներ բամբակ է բու-
տալու»:

Ըստ ինանջանի, նոյնն է վիճակը և այգեգործու-
թեան մէջ. «Վերջին տարիներում այգիների և խաղողի
արտածութիւնն անձան առանձին նշաններ չի տալիս: Ու-
նինք 10-12.000 հեկտար խաղողի և 4500 հեկտար
պտղատու ծառերի այգիների գրեթէ անփոփոխ տարա-
ծութիւն»: «Ձեռք կարող յատուկ չլինատակել այն
խայտառակութիւնը, որ կատարուեց Լամարլուի շրջա-
նում. մի շարք կոյտնտեսութիւններ այդ շրջանում ան-
ցեալ աշնանը շխտաբերին խաղողի այգիների մի զգա-
ւի մասի թաղանթ աշխատանքները՝ ցրտահարման և
փչացման անմիջական վտանգի ենթարկելով այդ այ-
գիները. այս աններելի, յանցաբորոժութեան աստիճա-
նի հասնող յանցանքի համար պատասխանատու է Լա-
մարլուի ամբողջ կուսակցական կարմակերպութիւնը»:

Բայց զգիւղատնտեսութեան ամենանոց տեղը ներ-
կայումս կազմում է անասնապահութիւնը: «Մեր եր-
կիրը շեշտած անասնապահական երկիր է, մեր 26
շրջաններից մօտ 20ը հիմնական անասնապահական շրջ-
աններ են, մեր երկրի բնական պայմանները լալն
հնարաւորութիւն են տալիս անասնաբուժութեան ցար-
գացման համար»: Սակայն, «ամփոփելով կենտրոնի և
տեղական կողմակերպութիւնների աշխատանքներն ա-
նասնապահութեան սոցիալիստական վերակառուցման
գծով՝ գալիս ենք այն եզրակացութեան, որ մինչև վեր-
ջին տարին անասնապահութեան խնդիրները չեն ար-

ժանացել անհրաժեշտ ուշադրութեան»: Որով «1931թ.
ունինքն Հայաստանում 757.300 գլուխ խոշոր եղջերա-
ւոր անասուն, որ կազմում է 1930 թի քանակի 96,7
տոկոսը: «Մանր եղջերաւոր անասուններ 1931թ. ու-
նինք 1,490,000 գլուխ կամ նախորդ տարւայ քանակի
92,8%ը: Իսկ յալանի է, որ 1930 թւին էլ աւելի թէ՛
անասուն կար, քան նախորդ տարին: Ասել է, անասուն-
ների թիւը Հայաստանում տարւէ տարի պակասում է .
ժողովուրդը անխնայ մորթում և ուտում է: «Ալալու-
սով, Հաստատում է ինանջանը, տեսնում ենք, որ դեռ
1931թ. շարունակուել է անասունների ընդհանուր թիւի
քոշ կրճատում»... Ձեռն օգնում է յատուկ օրէնքները,
որոնք հրատարակուում են անասունները մորթողների
դէմ:

Լաւ չեն և ոտոզման գործերը. «անցեալ տարի վեր-
ջում Սարգսապատի ջրանցքի կառուցումը, որ ոտո-
զում է 25.000 հեկտար, որից նոր հողեր՝ մօտ 8,000
հեկտար: Վերջումս, վերջապէս, Կարճեանի ջրանցքի
կառուցումը, բայց «վատ է տեղական ցանցի դրու-
թիւնը»: «Ճափաղանք թոյլ է տեղական ուժերի և մի-
ջոցների մորթիկացեան ջրային ուղիների մաքրման,
լայնացման, կարգի բերելու, ջուրը տնտեսելու համար:
Անեռափոքը աշխատանքի համար, որ կարելի է շատ
անդամ անել մի գիւղատեղի նախաձեռնութեամբ և
զիւրի ուժերով, մարդիկ սպասում են պետական թեղ-
ջի յատկացումների»: «Երկրորդ՝ ոտոզման մի շարք
աշխատանքներ սկսել են ասանց նախնական լուրջ ու-
սումնասիրութեան, ինչպէս Կարճեանի առուն, ճորը,
վերջապէս աւարտուեց հսկայական ջաջջումներից և
նախահաշուով սահմանած գումարից ուղղակի անհա-
ւատալի շահով գերազանցա կատարելուց յետոյ: Գործ-
ը մինչև վերջ չհասցնելու և կատարած ծախսերի դէմ
էֆեկտը (արդիւնք) չտալու օրինակ կարող է տալ Ել-
լիարի ջրանցքը, որի ոտոզելից մօտ 2000 հեկտար
զեռ մինչև այժմ էլ մնում է անշահել: Երրորդ՝ թոյլ
է նոր ոտոզման ցանցի լիակատար իրացման գործը.
Այլը-լճի ջրանցքը, որ համաձայն նախագծի պէտք է
ջրէ 6000 հեկտար հող, ջրում է մինչև այժմ 2.000
հեկտարից ոչ աւելի: Անբաւարար պէտք է համարել
նաև Փոքր-Սարգսապատի ջրանցքի ոտոզելի նոր տա-
րածութիւնների իրացման տեւպը: Ինչ վերաբերում
է ոտոզման ներկայումս ընթացող ամենախոշոր աշխա-
տանքներին՝ Ղուրի ոտոզմանը՝ աճա յատկին է, որ
այդ աշխատանքների ներկայ թափը նոյնպէս շատ հե-
ռու է բաւարար լինելուց. գրեթէ լրիւ ծախսելով ան-
ցեալ տարւայ պլանըրդի նախատեսած գումարը՝ Ջրա-
յին Տնտեսութիւնը վերջացրեց տարին՝ աշխատանքնե-
րի պլանի խոշոր թերակատարութիւնով՝ վտանգելով այս
տարի սպասող նոր տարածութիւնների ոտոզումը»:

Իր ճառում ինանջանը լալն տեղ է տալիս գիւղին
ու գիւղացիութեան: Գիւղը բողբոջների ամենացաւա-
տուն է: Դուրս է գալիս, որ «1930 թւի գարնան դէպ-
քերից յետոյ էք, զբաղմաթիւ շրջաններում կատարած
սխալները գիւղացիութեան հարցում՝ բաւական հող թո-
ղին դատակարարային թշնամու, կուլակային և հակա-
խորհրդային տարրերի ախտածաղման համար»: Գիւ-
ղացիութեան դժգոհութեան հիմքը շարունակում են
մնալ մթերումները և կլիտոզացումը, այսինքն՝ մը-
թերների բռնազբաւումը և հաւաքական տնտեսու-
թիւնների բռնի կազմակերպումը: «Մթերման ասպարի-
քում կատարած խայտառակութիւնների ամենացա-
տուն օրինակը հանդիսանում է Դարալազեաղը, ուր և
փորձ արին Արփա գիւղի՝ այլաբերած, հակախաղա-
թիականացած նախկին կոմունիստները պրովոկացիայի
ենթարկել գիւղացիների դժգոհութիւնը: Դարալազեա-
ղի դաւերը կուսակցութեան բոլոր կազմակերպութիւն-
ների համար լալն ընտրութեան տարւայ եղան: Դարա-
լազեաղի կուսակցական և խորհրդային նախկին ղեկա-
վարները վտարուելին կուսակցութեան շարքերից»,
բայց «վաստուել սպառնացանուում են, որ Դարալազեա-

դի դէպքերից յետոյ էլ, այս աշնան մթերումների ընթացքում, թէ տեղական և թէ կենտրոնական օրգանները կողմից կատարուել են յանձնաքնն ատիճանի հասնող թիրաքումներու ու ազատագրումները: Վերթիք բոլոր շրջաններում առանձին միջակ և նոյն իսկ չբաւար դիւրացիներ ստանում էին հացամթերումների և այլ մթերումների գծով պարտադիր առաջադրանքներ այն ժամանակ, երբ նոյն գիւղերում հացար ու մի մեքենայութիւնները դիմելով՝ հուլիս-ուրեմացած առանձին տնտեսութիւններ պատուում էին պարտադիր առաջադրանքից:

Այդ խայտառակութիւնից բացի, մթերում ապրանքների գներն էլ չեն վճարում: Քի՞նչ անուն տալ այդ խայտառակութեանը, երբ կատարած մթերումների դէմ ամիսներով Այգգիւնիօօպը և Արարատը չեն վճարում-աչլեզգործ գիւղացիներին և կոլտնտեսութիւններին՝ նրանց հասանելիք դումարները: Ի՞նչ անուն տալ այն խայտառակութեանը, երբ Մատոդղոմատը և Հայկօօպը մթերումների դիմաց խոտաղիմատը և գիւղացիներն և կոլտնտեսականներին որոշ չափով արդիւնաբերական ապրանքներ՝ ամիսներով քաշըլում են իրենց խոտածան կատարումը:

«Պայտասկ» է, ըստ Պանջեանի, և ճիւղերի խորհրդային իշխանութիւնը: Վիւղական ապարտի առանձին օրակների այլասերումը այնտեղ է հասնում, որ առանձին դէպքերում գիւղխորհրդի նախագահն աշխատանքի իր ձեռքով և կոպտութեան յիշեցնում է նախկին զեմիւլային. ինչքան էլ ծանր լինի, բայց չենք կարող այտուղ շարժանադրել, օրինակ, գիւղացիներին ծծեծելու մի քանի դէպքերի ամենախայտառակ երևոյթը գիւղխորհրդների նախագահների կողմից:

Վիւղացու կարգները անտեսած են խորհրդային իշխանութեան կողմից: Քի՞չ չեն շրջաններ, վկայում է Պանջեանը, ուր մինչև այժմ չի կանոնաւորւած, օրինակ, կերտիսի (քերչի) ազի, յուցիււ մատակարարման գործը: Քի՞չ չեն գիւղեր, որոնք շարժանքով մտնում են առանց նաւթի:

Այսպէս է Հայաստանի գիւղը, բայց, դուք, աւելի լաւ է քաղաքացու, բանտորի՝ վիճակը: Պանջեանը դրական պատասխան է տալիս և իբրև փաստ բերում է ազգաբնակչութեան աճումը: «1928 թիւ 922 հազար ազգաբնակչութեան փոխարէն Հայաստանում ունինք ներկայումս մէկ միլիոն քառասուն հազար ազգաբնակչութիւն. տարեկան աճումը վերջին տարիներում չի իջնում 4%ի սահմաններից: Ազգաբնակչութեան բնական աճումը վերջին տարիներում շարունակուած է մնալ ռեկորդային բարձրութեան վրա — 1000ին 38-39 մարդ տարեկան... Աւելի աչքառու է քաղաքային ազգաբնակչութեան աճումը: 1928 թիւ 172,000ի փոխարէն՝ Հայաստանի քաղաքային ազգաբնակչութիւնը կազմում է 220,000 մարդ»:

Հայաստանի բնակչութեան բնական աճումը, ի հարկէ, խիտ ուրախալի երևոյթ է, բայց դրանով զեռ չի հաստատուի ժողովրդի տնտեսական բարեկեցիկ վիճակը: Ընդհակարահը, ծնողաբերութեան բարձր սոսկուտ տալիս են, սովորաբար, յեամանաց, ոչ առաջնակարգ տնտեսական վիճակ ունեցող ժողովուրդները (բուլղար, իտալացի, ռուս, չինեան և այլն): Եւ բոլորովին անտղի է պարծենում Պանջեանը, թէ՛ ազգաբնակչութեան արագ աճումն արտացոլում է, անշուշտ, մեր երկրի տնտեսական վերելքը և մասաների դրութեան բարեբաւումը: Այդպիսի բարեբաւում Հայաստանում, գմբխտաբար, զոյուլթիւն չունի: Այդ պատճառներով են հէնց իր՝ Պանջեանի հաղորդած փաստերը:

Այսպէս, նա յայտնում է, թէ Հայաստանում, «1931 թիւն կառուցել է 54,000 քառ. մետր բնակարանային տարածութիւն»: Ընդունելով, որ մի բնակիչին տրբւում է երկու սենեակնոց մի բնակարան և հաշւելով բնակարանի խոհանոցով միասին 35 քառ. մետր, կու-

նենանք 54,000 : 35 = 1543 բնակարան: Բարեկեցութեան նշան է մէկ միլիոն բնակչութիւն ունեցող մի երկրի համար, «բնակարանային ծախս աստիճան սուր կրկնվիս պայմաններում», տարեկան 1543 երկնեանոցնոց բնակարանի կառուցումը: Եւրոպայի զաւառական մէկ փոքրիկ զաղաքում այդքան բնակարաններ են շինւում:

Կամ թէ չէ՞ Պանջեանը մեծ յաջողութիւն է համարում, 467 քանուրակային «բաշխման կէտ» (խանութ) ունենալը, կամ ամբողջ Հայաստանում «հասարակական սննդի 437 կէտ» (ճաշարան) ունենալը և կամ ուսուցչի ստացած ամսական 91 ռուբլի ռոճիկը: Համեմատեցէք այս թւերը Եւրոպայի ամենաշտամանց երկրի համապատասխան թւերի հետ, և պարզ կը լինի, թէ որքան ողորմելի են խորհրդային «յաջողութիւնները»:

Հայաստանի բնակչոյն բարեկեցութիւնը հաստատուում համար Պանջեանը բերում է մի շարք օրինակներ: Ա՛հա դրանցից ամենաբնականի կենսաբան պայմանները: Աարդարեան 8ովհաննէս, հեքենայական գործարանի բանւոր, աշխատում է 12 տարի. աշխատավարձը 220 ր. ամսական. ընտանիքը 3 շնչից, ապրում է նոր բնակարանում, 14 քառ. մետր տարածութեամբ սենեակում. խոհանոց և ջուր չկայ: Ինքը սովորում է բանֆակում, իսկ կինը Քին. տեխնիկում. ուսումն է բանուրական ճաշարանում. ամէն օր ստանում է մսով տաք ճաշ, 5-6ր. դրքի է տալիս, ծխում է, ունի ռաւոթո-բարիխոս, ամսական 3 աղաճ սինեմ կամ թատրոն է գնում:

Եւ Սարգսբեանը համարում է բախտաւորներից մէկը: Եւրոպայի ու Ամերիկայի բանւորները չեն նախանձի Հայաստանի այս երջանիկ բանւորին, որ երեք հոգով ապրում է մի փոքրիկ խցիկում, ուր նոյն իսկ կերակուր պարտաստելու յարմարութիւն ու ռուբ չուսնի...

Պանջեանը իր ճառում երկար տեղ է տալիս և «կոլտնտեսական յեղափոխութեան նշանումներին»: Դուրս է դալիս, որ «այս տարի անցանց ամբողջ Հայաստանում ընդհանուր պարտադիր ուսման թէ՛ գիւղում և թէ՛ քաղաքում»: Գրագիտութեան տեսակետից, ըստ վերջին վիճակագրութեան, «Հայաստանի 8 տարեկանից բարձր 747,600 ազգաբնակչութիւնից դրազէս են և կիսադրազէս 401,000 անձ: Հայաստանում 100 անձին ընկնում է 54 դրազէս միասին: 12-45 տարեկան անդադեաների թիւը կազմում է 230,000 անձ: Կարգադրւած է, որ 230,000 հոգին մէկ տարւայ ընթացքում դառնան դրազէսներ. կարելի՞ բան է: Վեալլեւիկների համար չկան անտիկ մտրոցներ», լուրտագորէն պատասխանում է Պանջեանը:

Գրականութեան ապագայում Պանջեանը արձանագրում է «քանակական մի շարք դրական մտենտներ», բայց «մեր գրականութեան որակը չափազանց յետ է մնում նոր պայմանների աւելի բարձր պահանջներից»: Մեր գրականութիւնը զեռ մինչև այժմ չկարողացաւ զեղարեւոտորէն արտացոլել մեր պայքարն ու ինքաբարութիւնն իրենց ամբողջ ծաւալում և խորութեամբ. նա չկարողացաւ զեղարեւոտական աչքի ընկնող գործերով ցոյց տալ մեզ ժամանակի հերոսներին, բանւոր հարաւայիններին, գիւղի սոցիալտնտեսական կերակուցուման Փրոնտում մարտնոց կոլտնտեսային ակտիւին... Մեր գրականութիւնը զեռ չուցեց էպոխայի պատկերացման ոչ մի «մեծ կտաւ»:

«Անբաւարար է դրութիւնը նաև արեւտաի միւս Փրոնտում՝ երաժշտութեան, կերպարեւտաի, կինոյի գծով»: «Մեր մի շարք ընկերները «ձախ» թեալազէտութեան որոշ նշաններ ցոյց տուին՝ խնդիր գնելով վարչական կարգով արգելել մի շարք տարածւած, կարելի է ասել ժողովրդական դարձած նոր երգեր» ։ «Հաշւետու շրջանում Հակիմիոյ արտադրութեան մէջ — իսկ արտադրութեան քանակական ցուցանիշները այնքան էլ վատ չեն — չկայ մի պատկեր, որ իղէդու-

գիական և դեղարեւստական մակարդակով աչքի ընկնող գործ լինի»:

Հայն տեղ է տուում և «ազգային քաղաքականութեան»: Խանջեանը Հաստատում է ամբողջապէս ազգային Հանրապետութիւնների իրաւունքների սահմանափակումը, բայց յայտնում է, թէ՛ ճկատարած սրբալիները ուղղելու Համար... մենք ամբողջ մի շարք ճշտումներ մտցրինք ազգային Հանրապետութիւնների և Ֆեդերատիւ օրգանների Փունկիաների և փոխյարարներութիւնների մէջ, մենք վերացրինք ճշարտապէս կենտրոնացումը Անդրֆեդերացիայի տնտեսական և կուլտուրական շինարարութեան ղեկավարման գործում, արդիւնաբերութեան և դիւրաշնորհութեան մի շարք ճիւղեր և օրգաններ, ինչպէս, օրինակ, տեքստիլ արդիւնաբերութիւնը, շինանիւթերը, ջրմիտակն, փայտամշակման գործը, սննդարդիւնաբերութիւնը և այլն՝ անցնել Հանրապետական օրգանների իրաւասութեան տակ, ճշտեցին և աւելի լայնացան Հանրապետական ղեկավարող տնտեսական օրգանների, օրինակ, Պետպլանի Փունկիաները»:

Խանջեանը վկայում է, որ ազգայնական տրամադրութիւնները շարունակում են ապրել. «Մենք ունինք Անդրկովկասեան տեղական նացիոնալիզմի արտայայտութեան այնպիսի օրինակներ, ինչպիսին էր վրացական ուկրոնիզմը (թեքում), Հայկական ուկրոնիզմը, մեր կուսակցութեան արագ և կոշտ նախկին ղեկավարութեան օրով և այլն: Մենք նկատում ենք կուսակցութեան լինիման ազգային քաղաքականութեան, Անդրկովկասեան Ֆեդերացիայի թերազնահատութեան առանձին տեղեկեցներ»: «Դաշնակիների արտասահմանեան շնորհ անընդհատ ոտնոցը բամբակի դէմ, պղծարդիւնաբերութեան գարգացման դէմ, Հայաստանի իր թէ՛ ճիւղազուգորդը դրութեան մասին՝ յաճախ են դուգադիպում մեր երկրում նացիոնալ-ուկրոնիստական տարրերի տրամադրութիւններին, միայն նրանք վախենում են բացայայտ արտայայտել»:

Ուրիշ խօսքով, այն ինչ որ դաշնակցականները ասում ու գրում են արտասահմանում բոլորովին Համապատասխանում է Հայաստանի իրականութեան, էլ ի՞նչ իմաստ ունին Խանջեանի երեխայական թօթովանքները Դաշնակցութեան Հասցէին: Կա իր ճառում աւազին

տեղ է տալիս Դաշնակցութեան և լստ սովորութեան, ստից, պրոպոնացիայի ու Հայհոյանքից դատ ուրիշ գնից չի կարողանում գործածել: Իբր թէ մենք, քուն ու Հանգիստ կորցրած, ամէն միջոցով աշխատում ենք արգելք լինել բուլեւիների շինարարութեան: Իբր թէ մենք խմբեր ենք ուղարկում Հայաստան կոլիտներին դէմ կուզուլ Համար. Յունաստանում կազմակերպել ենք զգարելի պրոպոնացիա խորհրդային Հայրենիքը մեկնող աշխատանքներին դէմ և մահափորձ՝ ուղղած Պորթոգ. Հայաստանի ներկայացուցչի դէմ. մեր գաշխատանքի Հիմնական խնդիրներից մէկը ինչ որ Համագրային կազմակերպութեան, Հիւստերտոնայ Հայկական պետութիւն ստեղծելու ցնորքն է, ի Հարկէ, չլայն ճակատով պայքարելու Համար Պորթոգ. Հայաստանի դէմ»: Գրական ապստամբութիւն ենք սարքում, Միւրիայում ազգային օճախ ենք Հիմնում, Բուլեւոս-Արքիտում սպանում ենք կոմունիստ Գապարեանին, Միւրիայում «տասնեակներով և Հարիւրներով Փրանսական ինքերկարկով բանտեր ենք լցնել տալիս դեմակցութեան եկած Հայ աշխատանքներին», «Ճճրանսայում մատնութիւններով և պրոպոնացիաներով զբոկում ենք վերջին պատառ Հացից՝ դաշնակիների դէմ պայքարող Հայ բանուրներին, և այսպէս բոլոր գաղութներում»:

Տեսնում էք ինչպիսի գարհուրելի հրէշներ են զգայնակները Խանջեանների խանգարած երևակայութեան մէջ: Արժ՞ Կերբէլ Հիւանդ օւղեղի այդ գառանցանքները...:

Խանջեանը Հայկովկասի մինչև այժմ եղած բոլոր քարտուղարներից ամենին աւանտ է և թեթևամտը, այդ պատճառով մեզ դրադեցնողը նրա դոճար ճճտերն ու ճկարծիքները չեն: Ինչպէս ասացինք, Խանջեանի ճառը Հետաքրքրական է իր փաստական նիւթերով, որի մեծ մասը, ասարեք խօսքերով, կրկնում է այն ինչ որ ասում ենք մենք անընդհատ: Խանջեանի ճառը ամէն բանից առավ իր սպանիչ քննաստութիւն է խորհրդային կարգերի: Ով ուզում է Հայաստանի այսօրայ վարիչներին վարկաբեկել, թո՛ղ Հայերէն թարգմանէ Խանջեանի ճառը և ասարածէ ժողովրդի մէջ. աւելի խայտառակ մարտասանաբի կարելի չէ յօրինել...:

Թ Ի Ի Ր Ք Ի Ո Յ Շ Ո Ի Ր Ջ

Քանի մը շարաթնելու ընթացքին, «խաղաղութիւն» վերահաստատում ճիւ թէի թրքական ճակատին վրա: Ընդ կողմէնք՝ լրագրական կրիպին մէջ:

Սպառնաց քրտական ուղղմանը, լուսութեան դասապարտած ըլլալով Արարատն ալ: Սպառնաց սուրիական ճակատի մաքսաննդութեան, ճնոր Հայաստանի, Հայիական արշաւանքի փամփոշտներն ալ: Այդ բոլորը անհրաճելտ ինչ բացաթիկ վարկերը քէարկելու, նոր դաւերու քարտուր կարծելու և Սուրիա Հաստատած Հայ գաղթականները ա՛ն ու գողի մատնելու, կամ Փրանսան մեղքի տակ ճգելու Համար:

Այո՛, ոչ միայն խաղաղութեան, այլ և բարեհաճութեան հով մը կը փչէ թուրք մամուլի ստուրցեալ էջերէն: Առ այժմ մէկզի դնելով արտասահմանի Հայ յեղափոխական թերթերուն արտայայտութիւնները, թուրք մամուլը կը թարգմանէ Հակադաշնակցական թերթերու «խմաստլից» խօսքերը և կը դնահատէ անոնց, հետեւաբար և Հայ ժողովուրդի մեծամասնութեան ուղմտութիւնը: Անոնց բերնով ալ կը Հաստ

ատտէ որ ճկոմտե՛հիշներն էին Հայ ժողովուրդի դժբախտութեանց պատասխանատուն, թէ թուրք այնցանք չունին. ճլուրտէն եկած մարդիկ» իրար ճգնցին երկու ժողովուրդները և պատահեցաւ սելուսակի լինել: Այս կախարդական մթնոլորտին մէջ էր որ, հնկիւրի քանըչտոք ժաման մէջ երթուելի նոր կանոնադրի մը Հաստատեց (18 փետր.), թուրքի վերադառնալու իրաւունք տալով փախտակահաններուն, Համաձայն կարգ մը պայմաններու:

Ուրեմն, թուրքիա մոռցած է անցալը և կուզէ սիրաշահի՛լ իր Հայ ճկախնտաշնները, ճիւտ այն պահուն երբ Արարիկիէն Հեռանալու հրաման տրած է 1915ի մնացողներէն խեղճուկ Համբանքի մը...:

Անշուշտ, աղաւթ է նաև արտասահմանի ճողաճախ» մամուլին բարի տրամադրութիւններէն, և ընդատառ կերթին բարեկամարար...:

Երանի՛ ճողիով աղքատներուն: Ճակաւին ստի՛ք կունենանք վերլուծելու երթուելի նոր կանոնադրին երբէն ճալքերը: Թող «Դիւրջակի»

ընթերցողները մէկ ամիս ալ սպասեն, և մենք արձանագրենք այն ինչ որ տեղի կունենայ հոգեպէս, հայկական անցեալ և ներկայ դէպքերու պարզաբանման առթիւ:

Վերջին տարիներու ընթացքին, բարձրաժիւ ճեղքը հրատարակեցան թուրք թերթերու մէջ, ներկայացնելու համար անցեալ պատմութիւնը՝ սուլթանական անտառականոցներէն մինչև արեան բաղնիքները, պարտական սաղարաններէն մինչև հայկական յեղափոխութիւնը, Մեծ Պատերազմի անցընդէն մինչև Համաթրքական շարժման ծագումն ու զարգացումը: Յուշեր, որոնք չինծու չեն, թէ և կը ստանան «յաւելեալ և ճշմարտացի», յաճախ դարձելի և հրէշային բովանդակութիւն, օրան կարգախօսին Համապատասխանելու համար. մանաւանդ երբ կապ ունին հայկական դէպքերուն հետ: Ինչպէս, օրինակ, Նազըմ փաշայի գրած, բայց վերստին խմբագրած պատմութիւնը:

Այս բոլորը կըլլան, անշուշտ, պատմութիւնը «լուսաբանելու» համար: Անցեալին արտոնները, չարքերները, փտութիւնները պայտուցանելու և քէմալայականութեան փառքը պանծացնելու համար: Եւ յաճախ ճիշտ են, երբ հասցը կը վերաբերի բուն թրքական կեանքին:

Միտութեան գիծ մը կայ բոլոր պատմութիւններուն մէջ: Կարմիր երկդ մը, որ աւելի կը շեշտուի, շօշափելի էր դառնալ, երբ կարող կուգայ ոչ-թուրք ժողովուրդներու կեանքին և մանաւանդ հայկական հարցին: Կրօնս որչազ կաղապար մը չինւած է, որուն մէջ կը թափեն, ինչ ու նոր պաշտօնարարներ և մտաւորականներ, հրեայ դիպացած ու չգիտացած, որպէսզի մէջտեղ գան ձուլածոյ պատկերներ, իրազիտական դասեր, թուրք նոր սերունդի քաղաքական դաստիարակութեան համար:

Արդարև, այս բոլոր ձեռնարկները կը կատարեն այն դերը ինչ որ մեր քաղաքական-յեղափոխական Յուշերը: Սա տարբերութեամբ որ, մինչ ամէն թուրք, առանց դասակարգի և դասանանքի խտրութեան, հաճութեամբ կը կարող իրեն հրամցած պատմութիւնները, կերպացնէր զանոնք և ներշնչման ազդիւրներ կը գտնէ, մեր մէջ ամենէն առաջ կուսակցական կերքն է որ կը խօսի, և սակաւմեծ մարդիկ միայն կը բարեհասին աչք մը նսեղ մեր արևունութեամբ տարեգրութեանց վրա:

Այսպէս, ուրեմն, Յուշերու, կենսագրութիւններու և պատմական վէպերու շրջան մը բացուած է թուրքերոյ մէջ, քաղաքական-դիւրորակային յաղթանակին հետ, թուրքին դիտակցութիւնն ալ խորացնելու համար:

«Միլլիէթ»ը դեռ նոր վերջացուց առաջին Ազգ. Մեծ Ժողովին պատմութիւնը: Դր կը խոսացնէ ազգային (միլլի-քէմալական) շարժման առաջին խմբումներն ու նւաճումները, և անմիջապէս սկսաւ երկրորդ շարքի մը, Աջլիթիտարը (Արթիւնեաց լեռ), Փալիհ Րեֆիկի պէչի ստորագրութեամբ: Տիրուցան նօթեր են, բայց ինչքան մօտ՝ թուրք երիտասարդի սրտին ու մտքին: Գիծեր և նշմարելիք՝ Մեծ Պատերազմի շրջանէն, երբ սուրբական ճակատը, Պէշրուք և յետոյ Եւրոսաղէմ կը գտնուէր Փալիհ Րեֆիկ, ձէմալ փաշայի հրամանին տակ:

Յուշերը կը շարունակեն տակաւին, բայց ինչ որ հրատարակած է մինչև հիմա, կը մատնէ հիմնական ողին — արդարացին ինչ որ կատարուեցաւ երէկ, ի միաս ոչ-թուրքերու, և նոյն ուղղութեամբ ալ զատփարակել նոր սերունդը, մասնաւորապէս հայկական պահանջներու հանդէպ:

Եւ ոչադրաւ պարտալայ — գրողն ու պատմողը այլևս մէկզի գրած են եզրվորոտեան կամ ժողարկեալ ձեւերը, և դէպքերը կը կոչեն իրենց անուններով, խնդիրները կը պարզեն անյալէս ինչպէս ծրագրած են:

Ահա ձէմալ փաշան, սուրբական ճակատի հրամանատարը, թունդ խլամ և կոտորոք-Քալիդ տիպար մը,

որ, երբ կը տեսնէ թէ Եւրոպայի, մասնաւորապէս Պերլինի և Վիեննայի սիտականները անազնի հարայահրոց կը բարձրացնեն Պաղատարին Հրեաներու տաճանի կացութեան, տարաբնութեան վրանդին առթիւ, կը կանչէ Եւրոսաղէմի հրեայ երեւելիները, և կաղապարէ —

«Երկուքն մէկը. — կա՛մ ձեզ Հայերուն պէս կը տարազրեմ: Ձեր տունները, այգիները, պարտէզները ձգելով ուղղակի դաշտ կերթաք: Եւ կա՛մ, ձեր տուններուն, այգիներուն և պարտէզներուն վրա ձեզմէ պահապաններ կը նշանակեմ և անոնց հրամանին տակ ստիկան և զինուոր կը դնեմ: Մէկ նարինջի ձեռք զարնողը կը կախեմ, ձեզ ալ կատախումբերով կը դրկեմ: Միայն թէ, այս երկրորդ ձեռով շարժելու համար, վաղ առտու պէտք է լռեցնել Վիեննայի և Պերլինի թերթերը»:

«Հրեաները բանակավարի հեռագրական կայանը գացին, և երկու տողով լռեցուցին ոչ միայն Վիեննան ու Պերլինը, այլ և Լոնտոնն ու Փարիզը»: (Փալիհ Րեֆիկ, «Միլլիէթ», 16 փետր.):

Ահա նոյն ինչ, Ցալիհ Րեֆիկ, որ նկարագրելով թախտէ կտիպ հանրի և շահագործող Պէշուտին Եւրոպայի տիպարները, անցողակի կը սանչեցնէ կարճ բայց խոսուն դրակները.

«... Այդ շրջանին թախտէ կտիպ հանրմ կատախումբեան հայկական, քաղաքականութիւնը քննադատող ՔԱՆԻ ՄԸ ԱՆՁԵՐՈՒՄ (ստորագծումը մերն է. խմբ.) գլուխը կը գտնուէր —

«... Առանցքն անդին կարարանի մը մէջ մեր բանակար (քոնիարթիւսան) մտաւ լուսազօգի Պէշու Եւրոպայի: Անոր ներկայացուցի թախտէ կտիպ հանրմը, Միւնչև այդ օրը հանրմը Պէշու Եւրոպայի անուրը և կարեւորութիւնը գիտէր, բայց տեղեակ չէր հայկական քաղաքականութեան մէջ անոր կատարած դերին: Իսկ Պէշու Եւրոպայ ալ մինչև այդ օրը միտքն իսկ չէր անցրել թէ հայրենասէր բայց իրեն պէս չմտածող մէկու մը պիտի հանդիպէ: Երկար վիճարարութիւններէ յետոյ, Պէշու Եւրոպայ կատախումբէն իջաւ, իսկ թախտէ կտիպ զիս վար զնկով, ըսաւ —

«Առանց գիտնալու մարդասպանի մը ձեռքը սեղմել տուիք ինձի»:

«Մինչ վարը Պէշու Եւրոպայի սկանչիս ծռելով, կը —

«Քեզի պէս նորահաս արժէքաւոր երիտասարդներուն պէտք է արգիլել ո՛ր և է հարողակցութիւն այս կնոջ հետ»: (Միլլիէթ, 17 փետր.):

Այնուհետև ամբողջ գլուխ մը — «Պատասխանատուն» — հայալինջ սարսափներու մասին: Լսեցէք միայն առաջին պարբերութիւնը և դատեցէք.

«Հայկական պատմութիւնը ոճիքի և անձնասպանութեան երկար պատմութիւն մըն է: Եթէ այսօր Անտոյուրի մէջ Հայ չէ մնացած, եթէ այնքան բախտերիկներ մարած, բոյներ ցրեցան եղած, երկրները փլած են, ատոնց պատմողը ոչ պատմութեան, ոչ ալ պատմագրութեան դատ մըն է: Գառճառը ուսական քաղաքականութիւնն է և հայ յեղափոխական կուսակցութիւնը:

«Մեծ Պատերազմին Հայերը կատախումբեան հետ միաժամանակ իրենց զօրաշարժի պատրաստութիւններն սկսան: Ութ տարեկանէն վեր բոլոր այրերը գիւրորական ուժ էին. բոլոր կիներուն և ծերերուն պաշտօն յանձնուած էր ջուր կրել, հաց եփել, փամփուռա լեցնել, փառօղի համար բորակ հաւաքել, ուսմը չինը»: (Միլլիէթ, 19 փետր.):



Ո՛ր և է խորհրդածութիւն՝ պիտի կոտորէ այս նախադատութիւններուն ուժը: Անոնք պիտճօրէն կը

խօսին իրենց Համար, — և կը խօսին Թուրքերուն արտին:

Իայց միայն թերթերը չեն որ այսպէս քաղաքական «ուսում կը շամբեն» ամբօրին ու նոր սերունդին: Այս Յուշերը անշուտ, գիրքերու պիտի վերածուին, աւելի տեական գեր կատարելու Համար: Եւ գիրքեր ալ կան ու կը հրատարակին իրարու ետևէ, միևնոյն ուղղութեամբ, — գործ դնել դահլիճին տեղ, — և փոխադարձաբար:

Կը ճանչնաք Ձիա Կէօք Արիբը, — Տիգրանակերտցի Թուրք մը, որ Ներմուտնի քարտիկն էր Համաթրքական, Թուրքմական շարժման, և որ մեռաւ քանի մը տարի առաջ:

Նոր լոյս տեսաւ իր կենսագրութիւնը, Պոյսոյ մէջ, անշուտ լատինատառ Թուրքերէնով: Ուսումնասիրելի նիւթ մ'է՛ Համաթրքական շարժումի գարգացման տեսակէտով:

Ուսման գլուխէն իսկ, պատմական տեղեկութիւններ հարդարելով Ձիա Կէօքի ծննդավայրին, Տիգրանակերտի մասին, Հեղինակը, Ալի Նելզէթ, կը յիշէ այն բոլոր ազգերն ու ցեղերը, որ դարերու ընթացքին իշխեր են այդ քաղաքին վրա: Կը յիշէ բոլորը, բացի ... Հայերէն: Այդ ոչինչ: Հեղինակը «պատմական» տկնարկէն յետոյ ցատկելով դէպի մեր օրերը, կը նկատաւրէ պարսպական ցոփութիւնները, Թուրք տարրին բազած տառապանքները, ոչ-Թուրքերու երանաւէտ կացութիւնը և կը շարունակէ:

— «Ոչ-իսլամները Ռուսերուն և Անգլիացիներուն Հովանաւորութեան տակ թէ՛ երկամիկ կենանք կը վարէին և թէ՛ արհեստներու և կրթութեան մէջ կը դարձանալին:

Ռուսական և անգլիական դեպիանտունները պրոպագանդի մէկ-մէկ կեդրոններ էին:

Րուսներն և Անասուրլի արեւմտեան մասերուն մէջ «Էթերիս» միութիւնը Յոյներուն, Հայերու կարգած Գաշնակ կոմիտէն ալ Հայերու շահերուն Համար կաշխատէր:

Մանաւորապէս Ռուսերուն դրդումով Հայերը 1896ին ուսմանը և հրացաններով ընդհանուր խռովութիւն մը յարուցին երկրին մէջ: Քաղաքներու Թուրքերը և գիւղերն էկած Գիւրտերը մարեցին այս արհնատ յեղափոխութիւնը: Եետոյ Ռուսերը սկսան նեղել Քապը Ալին և օտար քննիչ մարմիններ զրկեցին, ջնջութիւն կատարել տին: Այս ձևը Հովանաւորութիւնը բոլորովին շփացուց Հայերը:

Վերջապէս, Եւրոպայի, Ամերիկայի մէջ ուսում առած կամ իրրե պանդուխտ անտեղ Հաստատելով Տիգրայէզի իրենց ազգականներուն Հետ թղթակցող Հայերը մինչև այն ստեղծ արտաքին ազդեցութեամբ առանձնանորձման նմանող ինքնավարութիւն մը ուղղով Հայերուն մէջ անկախութեան մտայնութիւն մը ստեղծեցին:

Մանաւորապէս Մահմադարութեան յետոյ, Եւրոպի. Ժողովին մասնակցող Հայ երեսփոխանները իրենց անձնումխելութեանէն օգտուելով յայտնապէս Հայերը ապստամբութեան մղել սկսան:

Թերթերուն, Հանդէսներուն, գիրքերուն և եկեղեցիին թելադրանքը պատճառ եղաւ ընդհանուր անիշխանութիւն մը յառաջ բերելու Հայերու մէջ:

Վերջապէս, ընդհ. պատերազմին երբ Ռուսերը Վանի մօտեցան, արեւելեան նահանգներուն մէջ րնդարձակ ապստամբութիւններ ծագեցան և բաւական կոխներէ յետոյ զպսկեցան, և պատերազմէն վերջը Հայերը իրենց կամբով Մուրիան և Իրաք գաղթեցին»: (էջ 5-6):

Թարգմանեցինք բառ առ բառ, ի պէտս բոլոր Հին ու նոր իմաստուններուն, պատելիներուն և ողջամիտներուն:

Ուրեմն, «անցուիք մոռցուի է» և Հոգ ընելու բան չկայ: Կը մտայ... միայն անցադիր Հանել և վերադառնալ Թուրքիա:

Միևնոյն ոգին է որ կը վարէ պրոպագանդը՝ արտասահմանի մէջ: Անշուտ աւելի զուսպ և ճշմարտանման: Այս ճամբուն վրա որոշ Համբաւ չինած է Թրքուհի մը, Խալիտէ Խոխպը, որ աւարտած ըլլաւով Պոյսոյ ամերիկեան ջոխէճէ, տիրաբար կը խօսի ու կը զրէ անգլերէնը: Եւ իր գործունէութեան գլխաւոր ասպարէզն ալ Ամերիկան է: Քանի որ տարի առաջ երեցաւ Փարիզի մէջ, բայց բուն Հունտերը Մ. Նահանգներուն մէջ է որ կը ցանկ:

Իրեկ Մ. Քէմալի աչքէն ինկած և տարագիր՝ իր ամուսնին՝ Ասմանի, նախկին վարչապետ Ռէուֆի և Իրզիլի կուսակալ Բաճիկի Հետ, այս Թրքուհին Հայրենասիրական պարտականութիւն կը սեպէ տարփողել զժամայապետութիւնը, և արդէն ունի քանի մը հրատարակութիւններ՝ բոլորն ալ անգլերէն: Իր վերջին գործն է՝ «Turkey Faces West», («Թուրքիան դէպի Արեւմուտք»), տպւած՝ 1930ին:

Հարկ է թղթատել այս Հատորը, իմանալու Համար թէ ո՞րն է բուն Խալիտէ Խոխպը, ան որ կը ջնհարդաւէր ի Թթիհասի Հայկական քաղաքականութիւնը և «մարդապան» կը կոչէր ՊէՀա Եւթերը, ինչպէս կը պատճէ Ճալիլ Բեքրէ, թէ՛ ան որ այս գիրքը գրած է: Միևնակեալ բանն է թէ իր զգարմքը շատոնց սխալ էր, — այն օրէն երբ Մուրիա զնաց ձե՛մալ փաշայի կարգադրութեամբ, գլորդներ քանալու Համար, և իր բուն գոյնը դուրս տաւ Հայաջինջ սարսփներուն առթիւ: Այս կինն է, դարձեալ, որ Թուրքերէն վէպ մը գրած է Համաթրքական ոգիով, «Թուրան» և Հիացող մըն է Ձիա Կէօք Արիբի, որուն մէկ խօսքը բնաբան ընտրած է իր գրքին — «Մենք արեւելքէն եկանք և դէպի արեւմուտք կերթանք»:

Արդ, ինչ որ զրի առած է Թուրք գրագիրուհին այս գրքին մէջ, արտաքին սպասման Համար, կէտ առ կէտ կը Համապատասխանէ բուն Թուրքիոյ մէջ ներքին սպասման Համար եղած Հրատարակութեանց: Ի Հարկէ աւելի կիրթ, Հաստարակալիտ՝ և «մարդասիրական», քանի որ ամերիկեան Հեկալ և զարգացեալ զանգաւած է իր առջև: Եւ քանի որ բացմաթիւ Հայաստան և վաւերական Հրատարակութիւններ կան Հրապարակի վրա:

Խալիտէ Խոխպն ալ, Մեծ Պատերազմի ընթացքին Հայերու ձեռնըը՝ կը բացատրէ Տիւտ այսպէս ինչպէս բոլոր Թուրքերը: Դէպքերը կը բերէ կը կապէ այնպիսի տեղ մը, ուր օսմ. բանալը մահու և կենաց կռիւի մը բունած էր, և Թուրքիոյ Հայերը գլուխ վերցուցին:

— «Հայերը, որոնք զառնի պարտաստութիւններ ստեսած էին — գրոցմէ տեղեակ չէր Թուրք բանակը — Ռուսերուն օգնելու Համար, տարագրեցան և ջարդեր տեղի ունեցան տարագրութեանց ընթացքին: Ռուսական բանակը, որ Հայկական ուժեր բերաւ, վրէժ լուծեց Թուրքերը ջարդելով արեւելեան նահանգներուն մէջ: Հայկական ջարդերը ոչ միայն զառն ստեղծութիւն յարուցին Թուրքերուն դէմ ամբողջ աշխարհի մէջ, այլ և իրեն պատերազմական պրոպագանդի հիմք ծառայեցին դաշնակից մամուլին: Ինականաբար ոչ մէկը յիշեց Թրքական ջարդերը: Աստիճան մը ուրախ եմ ատոր Համար, որովհետեւ թէ նստական (սթիլի) և թէ տարբեր բան է շահագործել Ժողովուրդի մը տտաւապանքը, յառաջ շքերու Համար քաղաքական նպատակ մը և ի վերջոյ նոյն իսկ վնասակար է նոյն ինքն մարտիրոսացած Ժողովուրդին Համար, քանի որ կը զարդի մարդկային ողբերգութիւն մը ըլլալէն»: (էջ 142):

Յաջորդ էջին վրա, Խալիտէ Խոխպ վկայութեան կանչելով փրօք. Թոյնպին, կը յիշէ թէ Թուրքերն ալ

նոյնքան ջարդուեցան ուրիշ ազգերը, մասնաւորապէս Ռուսերու կողմէ, բայց չուզէր շատ խորանալ։

— «Պիտի ջանամ կարելի եղածին չափ խուսափել ջարդի մահաբանութիւններէ, թէև կուզէի աւելցնել, իբրև անցորդակի դիտողութիւն, թէ արևմտեան պետութեանց և մասնաւորապէս Ռուսաստանի քաղաքակաւտութիւնը՝ որ թուրքերն ու Հայերը մեզց կոկորդ կոկորդի փարելու, հինգ երկար դարերու տանելի համահեցութենէ մը յետոյ, իրապէս աւելի նպաստաւոր չեղաւ Հայերուն քան թուրքերուն։ Ուրիշ տեղ յիշած եմ թէ Ջոր. Մուտէնիչ ձեռնարկած էր արեւելեան Անատոլուն վերածելու ռուսական գաղութի մը, որմէ Հայերը դուրս ձգւած էին, մինչդեռ Ռուսիոյ պատրակը արեւելեան թուրքեան գրաւելու՝ Հայկական պետութիւն մը հաստատելու պատրակն էր։

«Մէկ իտալացի, Դանիակիցները աւելի գէշ վարուեցան Հայերուն քան թուրքերուն հետ, որովհետև վերջինները գոնէ գիտէին թէ ոչ մէկ սպասելիք ունին Դանիակիցներէն, այլ ընդհակառակն պէտք է յուսահատական պայքար մը մղեն, ապրելու իրաւունք ստանալու համար։ Հայերու պարագան տարբեր էր։ Անոնք շարունակ կը շոյշէին, կը խրախուսէին, աջակցութիւն և դրամ կը ստանային և կը սպասակիւնէին թուրքիոյ դէմ, անկախ Հայաստանի մը խոստումով, զոր Դանիակիցները դիտէին թէ անկարելի է։ Եթէ Հայաստան մը երևար Կովկասի մէջ, պարզապէս Ռուսաստանի մէկ մասը պիտի դառնար. եթէ հաստատէր հարաւային թուրքիոյ մէջ, պիտի ըլլար Փրանսական գաղութ մը։ Իրականին մէջ, Հայերը ոչինչ ստացան։ Անոնք պարզապէս ջարդուեցին ուրիշներէ և իրենք ալ ջարդուեցան, լլկւած՝ կործանարար ստեղծութեամբ մը զոր սերունդէ սերունդ կը շարունակեն և որ ուրիշ ամէն նպատակի կը ծառայէ բացի իրենց սեփական նպատակէն»։

Ամբողջ գրքին մէջ, պիտի գտնէք այսպիսի ակնարկներ. — թէև ցիրուցան և խուսափուկ, — բայց միշտ մինևորէ հոգեբանութեամբ — Հայերը գործիք եղան ուրիշներու ձեռքը, և ջարդուեցին ու ջարդուեցան։ Հայերը կուզէին կայսրութիւն հիմնել, և շարաշար պարտուեցան։ Հայերը գաւազրեցին, և հետեանքները կրեցին։

Պալիտէ Խոսիպ հանրմ կուզէ այն տպաւորութիւնը ձգել թէ փոխադարձ սպամութիւն էր որ կատարուեցաւ (Մուզաբէլէ) և ոչ թէ Հայալիշ կոտորած։ 1915ի աննախընթաց սարսափին ալ ուրիշ բան չէր, եթէ ոչ թուրք բանակին «ինքնապաշտպանութիւնը», որուն համար «Հայերը տարագրուեցան և ջարդու պատահեցան տարագրութեանց ընթացքին»։ Թալէաթն ալ ճիշտ այսպէս կը պատմէր, հայալիշ սարսափները լրացնելէ անմիջապէս յետոյ, Իթիթիհատի ժողովին մէջ, — «Բանակին պաշտպանութեան համար անհրաժեշտ էր ջար-

լուր փոխադրել» ժողովուրդին մէկ մասը։ Բայց, զկարգ մը անպատահութիւններ» պատահեցան փոխադրութեանց ընթացքին, բաւարար ուստիկան չգտնուելով...

Այնպէս որ, բան մը չէ փորձած 1915էն ի վեր։ Աւելցնակառակն, ջարդարար և յաղթական թուրքեան այնքան յառաջ գացած է որ, Մերոպայի և Ամմերիկայի պողոտաներուն վրա ևս, և անոնց լեղումը կը գրէ ու կը սպէ, դրել և տպել կուտայ պատմութիւնը այնպէս ինչպէս կը թխեն ու կուտուցանեն թուրքիոյ մէջ։

Բայց չգարմանսը։ Մեր մէջ ալ, հետզհետէ աւելի համարձակութեամբ, այդպէս էր որ «կը որբագրուի» պատմութիւնը։ Գոնէ թերթէ թերթ... Իսկ երևանաւոր արդէն փառապակը շահած է այս ճակատին վրա։ Հարց մը — Թուրքն է որ կը բալէ թէ մեծը։

ՅՈՒՇԱՏԵՏՐ. — «Հարմիտէթը Միլլէի», էն-կիւրիի պաշտօնաթերթը, 1932 փետր. 18ին հրատարակեց երթեւեկի նոր հրահանգը, որ վաւերացած է գործադրութեամբ խորհուրդին 1932 Յունւար 31ի նիստին մէջ։

Նոր կանոնադրով, որ կը բաղկանայ հինգ յօդուածներէ, կը ջնջուին 1924 Յունիս 2 և 1930 Դեկտ. 17 թակիր հրահանգները, որոնց 1, 4, 5 և Յրը յօդուածները մասնաւորած էին Հայերուն, իսկ միւսները իսլամներուն, Յոյներուն և Հրեաներուն։ Նոր հրահանգը գնահատութիւններ չի դնէր, և թուրքիա մուտքը կարգիլէ միայն 1. 150նոց ցանկին մէջ եղածները (թուրքեր, Ձէրքէզներ ևն. որ դաւաճան հռչակած են)։ 2. Անոնց որ պաշտօնապէս վտարած են թրքական հպատակութենէ։ 3. Անոնց որ երկրէն դուրս գանձած են իբրև անգամ կայսերական զեղրատանին (խանէ-տան)։ Այս ցանկէն դուրս, կրնան թուրքիա մտնել 1. Անոնք որ առանց անցադրի արտասահման փախած են։ 2. Որ օսմանեն (հին) անցադրով գացած են։ 3. Որ հինէն ի վեր օտար երկիր կը գտնուին և հինգ տարի թրքական հիւպատոսարան չեն հանդիպած, չեն արձանագրւած։

Կանոնադրին տրամադրութեամբ, անոնք որ կուզեն թուրքիա վերագառնալ, պիտի դիմեն իրենց բնակած քաղաքին հիւպատոսարանը և յատուկ յայտագիր-հարցարաններու վրա պիտի գրեն պատասխանները։ Այս յայտագիրներէն երկուքը պիտի դրկւին էնկիւրի, Ապահովութեան Տեսչութեան, և դալիք պատասխանին համաձայն պիտի արտօնուի կամ մերժուի դիմումը։

Ինչպէս ըսինք, առիթ պիտի ունենանք առանձին խօսելու այս մասին։ Տարակոյս չկայ թէ խաճ մըն է որ կը նետէ էնկիւրին, քաղաքական և տնտեսական պատճառներով, զոյնդոյն ձուկեր որսալու համար։

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի ն ո թ Խ ա ղ Է ն

ԱՅՍՈՒՆԵՏԵԻ « Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի ն ՈՒՂՂՈՒԱԾ ՆԱՄԱԿ, ԳՐՈՒԹԻՒՆ, ԳԻՐՔ, ԹԵՐԹ, ԴՐԱՄ ԵՒ ԱՄԵՆ ԿԱՐԳԻ ԱՌԱՔՈՒՄ ՈՒՂԱՐԿԵԼ ՇԵՏԵԻՒԼ ՀԱՍԵՒՈՎ.

Rédaction „DROSCAK“ 71, ave. Kléber
PARIS (XVI) France

ԻՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼ

Հետևաբ Արևելեամ ճապոնացիների կողմից բն-
ձեռած պատերազմական արևմտեցիությունների առ-
թիւ, Ը. Ա. Ինտերնասիոնայի Բիւրօն հետևեալ կոչմ
է հրատարակել Փետրուար 26ին.

ԲՈՒՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԻՈՐՆԵՐԻՆ

Ճապոնիան, ներխուժելով Ձիհաստան, չղթաշա-
ղերծ է արել պատերազմական կառավարութիւնները
Արևելեան Ասիայում: Մտադրութիւն կայ Մանջու-
րիան դարձնել «ինքնավար հանրապետութիւն», որ
պարզ խամաճիկ է լինելու ճապոնական իմպերիալիզմի
ձեռքին: Արևմտահեղ կոնկրետի թատերաբեմ են դարձել
Շանքայի պէս հակաբան թաղաքի փողոցները:

Գանի Ճապոնիան իր պատերազմական գործողու-
թիւնները Մանչուրիայում իր կատարում՝ մեծ պետու-
թիւնները ոչինչ չէին ձեռնարկում արգելելու Ճապո-
նիային որ շրտնաբարէ իրենց ստորագրած դաշնագրե-
րը որպէսզի ճապոնական հրոսակները թողնէին չի-
նական հողերը, որ դրանէ էլին հակառակ ամէն մի
իրատուքի:

Միմիայն Շանքայի և Կանկինի ուժակոծութիւնը
յուզումներ մատնեց դրամատիքական կառավարու-
թիւններին: Սակայն, նրանք չեն համարձակուում վրձ-
նական միջոցներ զիմել, թէև երկիւղ օւնին Ձիհաս-
տանում օւնեցած իրենց սեփական շահերի մասին: Ընդհակառակը, նրանք նոյն իսկ ուսումնասիրեց են մա-
տակարարում Ճապոնիային և առանց բողբոջ լուում
այն ստալոզ խաղաղասիրական ճառերը, որ ճապոնա-
կան պատերազմներն արտասանում են Ձիհաթափու-
թեան Խորհրդատուներում:

Համաշխարհային Հասարակական կարծիքի, համ-
աշխարհային ընկերվարական աշխատատեղութեան և
չինական պատերազմների ճնշման տակ, Ազգերի Գաշ-
նակցութեան Խորհուրդը սուրբուց Ազգերի Դաշնակ-
ցութեան արտակարգ Ընդհանուր Ժողով հրաւիրել, որ
պէտք է դրադի Հետևաբ Արևելեցի պատերազմի հար-
ցով: Բայց ոչինչ չկայ որ մեզ ենթադրել տայ, թէ այս
Ընդհանուր Ժողովը նազ եղիւի պատկեր պիտի ներ-
կայացնի իր անգորութեամբ, քան Խորհուրդը:

Բողհարման սկզբին, Ազգերի Դաշնակցութեան
Երևան բերած անգորութիւնը իրախուսել է ճապոնա-
կան խելագար իմպերիալիզմը՝ հետապնդելու իր հը-
կայական ծրագիրները: Նա ձեռնարկել է Ձիհաստանի
դէմ մի աւարտանէլ արշաւանք, որ շնական բացայա-

տութեամբ ցուցահանում է Ուսմողական պատերազմի
ընտրոզ գծերը: Այս կացութեան մէջ, ճապոնական իմ-
պերիալիզմը բարոյական օրէնքից դուրս դնելը Ազգե-
րի Դաշնակցութեան առաջին պարտականութիւնն է
հանդիսանում: Դա այն նազագոյնն է, որ կարելի է
պահանջել պատերազմը օրէնքից դուրս յայտարարած
և այնքան մեծ այժմուկով պանծացած դաշնագրի տակ
ստորագրած պետութիւններին:

Մենք առանձին պատերազմներ չենք սնուցանում
միւս աշխարհակալ պետութիւնների մասին, որոնք
նոյնպէս չինական հողեր են բռնագրաւել և ձգտումներ
ունին Ձիհաստանում շահեր պաշտպանելու: Մենք
գիտենք, որ պատերազմը Հետևաբ Արևելեցում, ուր
բոլոր մեծ պետութիւններ շախարակալական շահերը
բախում են իրար, կարող է ուշ կամ կանուխ համաշ-
խարհային հրդեհ բռնկեցնել: Մենք գիտենք, որ Ատ-
լանտան Ովկիանոսի Համաշխարհային պատերազմից
յետոյ՝ մեզ սպասում է Խաղաղական Ովկիանոսի
համաշխարհային պատերազմի վտանգը: Ամենքի պար-
տականութիւնն է արգելք հանդիսանալ այս գծախու-
տութեանը, որ անհաշուելի հետանկարներ կարող է ու-
նենալ մարդկային թաղաքալրութեան համար:

Մրս համար մենք պահանջում ենք ամենից առաջ.
Յայտարարել Ճապոնիան իրբեւ յարձակող կողմ.
Դադարեցնել անյապաղ գինսթիքերի և վարկերի
մատակարարումը Ճապոնիային:

Տնտեսական և Ֆինանսական ճնշումի բոլոր մի-
ջոցները կիրառել հարկադրելու Ճապոնիային, որ դա-
դարեցնի իր նաւթային գործողութիւնները:

Չանանջել Ճապոնիայի կողմից Ձիհաստանում կա-
տարւած ուէ ճնշում, անգամ եթէ վերջինս Ձիհաստա-
նին պարտագրւած դաշնագրով վաւերացած լինի:

ԲՈՒՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԿՈՄՍՏԱՆՍՊՈԼԻՍ

Սուրիպեցէ ձեր կառավարութիւններին իրականա-
ցնելու այս պահանջները:

Մի հանդուրժէք, որ դրամատիքական կառավա-
րութիւնները օգնին պարտատեղու հետագայ համաշ-
խարհային հրդեհը՝ դաւակցելով ճապոնական իմպե-
րիալիզմին կամ ստորութիւնների դիմելով:

Յոյցեր կազմակերպեցէք ամենուրեք ճապոնական
և համաշխարհային իմպերիալիզմի դէմ:

Անկցի իմպերիալիզմը:

Կեցցէ՛ք խաղաղութիւնը և գինսթափութիւնը:

Ը. Ա. ԻՆՏԵՐՆԱՍԻՈՆԱԼԻ ԲԻՒՐՕ

Բ Ո Վ Ա Շ Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Խաղաղութեան երշտակները ժընևուս (Խմբ.)	49
Քաղաքական դասանմանը և չեզոք մտաւորակա- նութիւնը (Կ. Սասունի)	52
Նոր ուղիներ ընկերվարութեան մէջ (Ս.)	54
Բաւերը և Աղիերը բոլշևիկների մասին	58

Հիւսւածեղէնի քարտարաբանութիւնը	61
№ 428 Որոշումը	62
Կարմիր գծից ներս	64
Թիւրքիոյ շուրջ	68
Ինտերնասիոնալ	72

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի

Թիւն արժէ 2 ֆր. 50 սանս.

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի հասցե՛մ՝

Rédaction « DROSCHAK »
71, ave. Kléber. PARIS (16^e)

Gérants: Dolauvelles Hambourgniaim

Imp. de Navarre, 5, rue des Gobellin, PARIS (13^e)